

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման պլան (2014-2018)



CRITICAL ECOSYSTEM
PARTNERSHIP FUND

Կրիտիկական
էկոհամակարգերի
համագործակցության
հիմնադրամ



Միացյալ ազգերի
կազմակերպության
զարգացման ծրագիր



Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ

Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության
Նախարարություն

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի
կառավարման պլան
(2014-2018)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀՀ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք

Համայնքի ղեկավար

Ս.Սուրիսյան

Ս. Սուրիսյան
«08» 10 2013թ.



ՀՀ Վայոց Ձորի մարզ, Խաչիկ համայնք

Համայնքի ղեկավար

Վ.Ներսիսյան

Վ. Ներսիսյան
«8» 10 2013թ.



ՀՀ Վայոց Ձորի մարզ, Գնիշիկ համայնք

Համայնքի ղեկավար

Ս.Մելքոնյան

Ս. Մելքոնյան
«8» 10 2013թ.



Երևան – 2013

~ 2 ~

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		6
ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		8
1.1.	«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման նախապատմությունը և տեղադիրքը	8
	1.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառուցվածքը	9
1.2.	«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման ընդհանուր նպատակը	11
1.3.	Ազգային համատեքստ	11
1.4.	Բարենպաստ մարտավարություն և օրենսդրություն	12
1.5.	«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի սահմանների նկարագրություն	15
1.6.	«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բնական պայմանները	23
	1.6.1. Կլիման	23
	1.6.2. Ռելիեֆը և հողերը	24
	1.6.3. Զրագրությունը	25
	1.6.4. Էկոհամակարգերը և բուսական աշխարհը	26
	1.6.5. Կենդանական աշխարհը	35
1.7.	Սոցիալ-տնտեսական իրավիճակը	40
	1.7.1. Ժողովրդագրություն	40
	1.7.2. Հողերի և բնական ռեսուրսների օգտագործումը	44
ԳԼՈՒԽ II. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ		50
2.1.	Հիմնական առանձնահատկությունները	50
2.2.	Կարևորության գնահատում	53
2.3.	Սահմանափակումներ, հնարավորություններ և վտանգներ	54
ԳԼՈՒԽ III. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ		62
3.1.	Տեսլական	62
3.2.	Նպատակներ	62
ԳԼՈՒԽ IV. «ԳՆԻՇԻԿ» ՊԱՀՊԱՆՎՈՂ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ		63
4.1.	Գոտիավորման հասկացությունը	63
	4.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գործառնական գոտիները	64
	4.1.2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտի	64
	4.1.3. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ավանդական հողօգտագործման գոտի	66
	4.1.4. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի պահպանման գոտի	67
ԳԼՈՒԽ V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ		68
5.1.	Կառավարման ծրագիր	68
	5.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի վարչական ծրագիր	68
	5.1.2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի անձնակազմի որակավորման բարձրացում	70

	5.1.3.	Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք	71
5.2.		Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր	73
	5.2.1.	Հիմնավորում և խնդիրներ	73
	5.2.2.	Մարտավարություն	74
5.3.		Պահպանության ծրագիր	75
	5.3.1.	Նպատակ և խնդիրներ	75
	5.3.2.	Խոշոր գիշատիչ-մարդ կոնֆլիկտի մեղմացում	78
	5.3.3.	Պահպանության ծրագրի մարտավարություն և կառավարման ուղեցույց	78
5.4.		Տուրիզմ, էկոլոգիական իրազեկություն և հասարակայնության հետ կապերի ծրագիր	79
	5.4.1.	Հիմնական սկզբունքներ	79
	5.4.2.	Տուրիզմին վերաբերող խնդիրներ ու մարտավարություն	80
	5.4.3.	Էկոլոգիական իրազեկություն	82
	5.4.4.	Հասարակայնության հետ կապեր	83
	5.4.5.	Տուրիստական ենթակառուցվածք	83
5.5.		Գիտական հետազոտությունների և մոնիթորինգի ծրագիր	84
ԳԼՈՒԽ VI. ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ			86
6.1.		«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բնականոն գործունեության ապահովման համար նախատեսվող եկամուտների աղբյուրներ	86
6.2.		«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի նախատեսված բյուջե 2014-2018թթ համար	87
	6.2.1.	Անձնակազմի հաստիկային ցուցակ	87
	6.2.2.	2014թ-ի գործուղման ծախսերի հաշվարկման վերաբերյալ տեղեկանք	87
	6.2.3.	2014 թ-ի ջեռուցման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկ	88
	6.2.4.	2014 թ-ի էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ /բացառությամբ ջեռուցման/	88
	6.2.5.	2014 թ-ի ջրօգտագործման ծախսերի հաշվարկ	89
	6.2.6.	2014 թ-ի կապի ծառայությունների վճարների հաշվարկ	91
	6.2.7.	Տրանսպորտային միջոցների պահպանման 2014թ-ի ծախսերի հաշվարկ	94
	6.2.8.	2014-2018թթ. գնահատված գործառնական բյուջե	95
6.3.		ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2014-2018թթ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման բարելավման գործողությունների պլան	104
	6.3.1.	Բնապահպանության ծրագիր	104
	6.3.2.	Ռեկրեացիոն ծրագիր	119

Հավելվածներ

Հավելված 1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բույսերի տեսակների ցանկը

Հավելված 2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կանդանիների ցանկը

Հավելված 3. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտում և պահպանման գոտում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը

Քարտեզներ

Քարտեզ 1 «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի սխեման և տեղամասերը

Քարտեզ 2 Հայաստանի բնապահպանական տարածքները

Քարտեզ 3 «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հողօգտագործման սխեման

Քարտեզ 4 «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գոտիավորման սխեման

Քարտեզ 5 «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ենթակառուցվածքը

Քարտեզ 6 «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի էկոտուրիստական երթուղիները

Հապավումներ

ԳՊԼ	«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ
ԲՀՊՏ	բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
CBD	«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա
CITES	«Բուսական և կենդանական աշխարհի վայրի անհետացող տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա

GEF	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
IUCN	Բնության պահպանության միջազգային միություն
CEPF	Կրիտիկական էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամ
WWF	Բնության համաշխարհային հիմնադրամ

Կառավարման պլանում օգտագործվող համայնքների և գետերի անվանումները

Համայնքներ

Արենի
Ագարակաձոր
Եղեգնաձոր
Գնիշիկ
Մոզրով
Խաչիկ
Գանձակ

Գետեր

Արփա
Գնիշիկ
Գռավ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն կառավարման պլանը մշակվել է Բնության Համաշխարհային Հիմնադրամի (WWF) Հայաստանյան գրասենյակի կողմից՝ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ՄԱԶԾ-ԳԷՀ միջին ծավալի ծրագրի և ԿԷՀՀ (CEPF) «Գնիշիկ» համայնքային արգելավայրի ստեղծման միջոցով էկոլոգիական միջանցքների ինտեգրում և ընդլայնում Փոքր Կովկասի արևելյան հատվածում (Հայաստան)՝ ծրագրի շրջանակում:

Կառավարման պլանը համապատասխանում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված և 2002թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Բնության հատուկ պահպանվող տարածքների կազմավորման ռազմավարությանը և Հայաստանի ազգային գործողությունների ծրագրին»: Ի լրումն այլ նպատակների՝ ռազմավարությունը նախատեսում է ԲՊՄՄ (Բնության պահպանության միջազգային միություն) 5-րդ կարգի պահպանվող տարածքի հիմնադրում Գնիշիկաձորի տարածքում:

Կառավարման պլանը ընդհանուր կառավարման մեթոդներն ու նպատակները, ինչպես նաև որոշումների կայացման կարգը ներկայացնող փաստաթուղթ է: Կառավարման պլանը համառոտ փաստաթուղթ է, որը պարզաբանում է պահպանվող տարածքի առանձնահատկությունները, հստակ կերպով սահմանում է կառավարման նպատակառոտվածությունը և նախանշում է գործողությունների ծրագիրն ու ժամանակացույցը: Կառավարման պլանի բաժինները անդրադառնում են գոտիավորման առավել մանրամասն ասպեկտներին՝ այցելուների, պահպանության և վարչական ծրագրերի իրականացումը ուղղորդելու համար: Այնուամենայնիվ կառավարման պլանը այն հիմնական փաստաթուղթն է, որից բխում են մյուս ծրագրերը: Որպես կանոն, անվստահությունների կամ տարաձայնությունների պարագայում այն ուղղորդիչ է և առաջնային:

Սույն կառավարման պլանի հիմնանպատակը կառավարման համակարգի օպտիմիզացումն է և տարբեր գործողությունների ու զարգացման հեռանկարների սահմանումը, ինչը կապահովի պահպանվող լանդշաֆտի՝ ԲՀՊՏ կենսաբազմազանության և լանդշաֆտի պահպանությանն ուղղված կայուն գործունեությունը:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը գտնվում է Վայոց ձորի մարզում: Նախագծվող պահպանվող լանդշաֆտի տարածքը ընգրկված է Կովկասի էկոտարածաշրջանի առաջնային բնապահպանական տարածքների (Կովկասի էկոտարածաշրջանային պահպանության ծրագիր 2004)¹ և ԿԷՀՀ տարածքների ցանկերում (Կովկասյան էկոհամակարգերի համառոտագիր 2003)²:

Շրջակա միջավայրի գնահատման զեկույցը բաժանվել է 3 մասի:

ա) Լանդշաֆտի էկոլոգիական վերլուծություն՝ ճանաչելու տարածքի կարևորագույն

¹ Առաջնային բնապահպանական տարածքների ընտրություն: Վերակազմվել են կարևոր տաքսոնային տարածքները քարտեզային տարբերակով, և գնահատվել է կենսամիջավայրի ընդհանուր պատկերը: Այս վերլուծության արդյունքում ընտրվել են պահպանության ենթակա 56 տարածքներ՝ Կովկասյան էկոտարածաշրջանի առանձնահատուկ կենսաբազմազանությունը պահպանելու համար: Այս պահպանվող տարածքները չեն բնորոշվել որպես ամբողջական պահպանության ենթակա արեալներ, սակայն պահպանության անհետաձգելի միջոցառումների առումով դրանք, անկասկած, կարևոր տարածքներ են:

² ԿԷՀՀ նախանշված տարածքների ընտրություն: Վեց տարածքներում որոշվել են և վերանշվել գլոբալ մակարդակում վտանգված էնդեմիկ կենդանատեսակներ ու բուսատեսակներ (կաթնասուններ, թռչուններ, սողուններ, երկկենցաղներ, ձկներ և բուսատեսակներ): Պահպանության կարևոր վայրերի բնորոշման նպատակը հետևյալն է. հայտնաբերել տեղանքներ, որտեղ ներդրումները կօգնեն ստեղծել պահպանվող տարածքներ կամ հաստատել հատուկ պահպանման համակարգեր, ընդարձակել գոյություն ունեցող պահպանվող տարածքները և բարելավել պահպանվող տարածքների կառավարումը՝ կանխարգելելով կենդանատեսակների անհետացումը և կենսաբազմազանության ոչնչացումը:

առանձնահատկությունները, կենսաբազմազանությունը և նրանց վրա ներագործված վնասաբեր գործոնները:

բ) Սոցիալ-տնտեսական հետազոտություն և գնահատում՝ պահպանվող տարածքի համայնքներում կենսապայմանները որոշելու, այլընտրանքային եկամուտի աղբյուրները բացահայտելու և դրանք բարելավելու համար:

գ) Առաջարկներ. կառավարման նպատակների սահմանում (հիմնված ԲՊՄՄ չափորոշիչների վրա) և տարածքի գոտիավորում: Գնահատման փուլը հիմնաքարային նշանակություն է ունեցել հնարավորությունների և վտանգների բացահայտման և պահպանվող լանդշաֆտի կազմավորման արդյունքում առաջացած ռիսկերի և կարողությունների ճանաչման համար: Այն նաև նպաստել է երկրորդ փուլի իրականացման լավագույն տարբերակի (պահպանվող տարածքի կառավարման պլանի նախագծի կազմում) ընտրությանը:

Լանդշաֆտի գնահատումը ցույց է տվել, որ տարածքի լանդշաֆտը պետք է պահպանվի և վերականգնվի հետևյալ պատճառներով.

ա) այն ցածր հարմարվողականություն ունեցող չոր տափաստանային լանդշաֆտ է, բ) այն կազմավորված է, իսկ էկոլոգիական միջանցքների մասնատված բնույթը չի ապահովում էկոլոգիական ցանցի գործառնությունը, գ) տարածքում առկա են մարդածին ճնշումներ (անտառհատում և որսագողություն), վերահսկման և մոնիտորինգի բացակայություն, դ) տեղի բնակչության էկոլոգիական ինքնագիտակցության նվազ ռեսուրսներ:

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման նախապատմությունը և տեղադիրքը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը նախատեսված է ՀՀ կառավարության կողմից հաստատված ԲՀՊՏ-ների զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրով: Պահպանվող լանդշաֆտի ստեղծման աշխատանքները մեկնարկեցին 2010 թ ՄԱԶԾ-ԳԷՀ “Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում” և ԲՀՀ-ԿԷՀՀ ծրագրերի շրջանակում:


«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Երևանից 120 կմ հեռավորության վրա: Պահպանվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 6010.74 հա:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքը արևմուտքից եզերված է ՀՀ պետական սահմանով, հարավից Վայքի լեռնաշղթայով, արևելքից Գռավ, իսկ հյուսիսից Արփա գետի հովիտներով:

1.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառուցվածքը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը ամբողջությամբ գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի տարածաշրջանում, զբաղեցնելով Արփա գետի ավազանի ձախափնյա մասը կազմող Վայոց Ձորի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լանջերը: Պահպանվող լանդշաֆտը բախկացած է երեք տեղամասերից՝ «Արենի», «Խաչիկ» և «Գնիշիկ»: Տեղամասերի տեղադիրքը ներկայացված է քարտեզ 1.

Քարտեզ 1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի սխեման և տեղամասերը



Պահպանվող լանդշաֆտը իր արևմտյան և հարավային հատվածներում («Խաչիկ» տեղամասի սահմաններում) սահմանակից է Նախիջևանին: Նախնական հաշվարկներով լանդշաֆտի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է ` 6010.74 հա:

«Արենի» տեղամասը ընդգրկում է Ամաղու գետի կիրճի լանջերը և Ամաղու գյուղատեղի հարավային մերձակայքը: Տեղամասը նշանալի է խիստ կտրատված

ռելյեֆով և զառիթափերով: Ցածր բարձրությունները Ամաղուի կիրճում ներկայացված են լեռնային կիսաանապատներով՝ ծածկված չորասեր թփուտներով և այլ բուսականությամբ: Այս գոտում՝ տեղամասի հյուսիս-արևմտյան փոքր հատվածում աճում են Թախտաջանի սապնարմատը և ենդեմիկ սրոհունդ գեղատեսը: Կիսաանապատներից բարձր այդ կիրճը ծածկված է գիհու նոսր անտառով և այն հարուստ է ժայռերով, որոնք տեղաբաշխված են նրա ամբողջ երկայնքով և կարևոր նշանակություն ունեն բեզոարյան այծերի և այստեղ բնադրող գիշատիչ թռչունների համար:

«Արենի» տեղամասի հողատարածքները գտնվում են Արենի համայնքի վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 710.46 հա:

«Խաչիկ» տեղամասը ընդգրկում է Հարսնաքար լեռան հյուսիսային և հյուսիս-արևմտյան լանջերը և նրանց հարակից լեռնային զանգվածները, ինչպես նաև Գնիշիկ լեռան արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան լանջերը և նրանց շարունակությունը դեպի արևմուտք մինչև պետական սահման: Երկու լեռնագագաթների միջև ընկած հատվածում գետ է սկիզբ առնում, որը հոսելով դեպի հյուսիս-արևմուտք միանում է Ամաղու գետին: Հարսնաքար լեռը «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ամենաբարձր գագաթն է (2773մ), որի մարգագետինները կենսամիջավայր են հանդիսանում հազվագյուտ վայրի հնդկահավի համար: Տեղամասը գրեթե ամբողջությամբ ներկայացված է լեռնատափաստանային գոտում գտնվող փոքր թեքություն ունեցող լանջերով, որոնք կարևոր նշանակություն ունեն այստեղ հանդիպող Հայկական մուֆլոնի համար: Տեղամասի հյուսիս-արևելյան մասը ծածկված է գիհու նոսր անտառով և նրա փոքր հատվածը՝ Ամաղու գետի կիրճում, զբաղեցված է ժայռերով: Ժայռոտ ձորակ է գտնվում նաև տեղամասի արևմտյան հատվածում՝ ՀՀ պետական սահմանի մոտ:

«Խաչիկ» տեղամասի հողատարածքները գտնվում են Խաչիկ համայնքի վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2381.25 հա:

«Գնիշիկ» տեղամասը ընդգրկում է Գանձակ լեռան ամբողջ զանգվածը՝ արևելյան մասում սահմանվող Մոզրովի և Գանձակի գյուղատեղիներով, իսկ արևմտյան մասում՝ Ամաղու գետի կիրճով: Այնուհետև, նեղ լեզվակով հատելով կիրճը, տարածքը շարունակվում է դեպի հարավ-արևելք, ընդգրկելով Հարսնաքար լեռան հյուսիս-արևելյան ստորոտները և Գնիշիկ գյուղից դեպի արևմուտք գտնվող լանջերը:

Գանձակ լեռան լանջերից սկիզբ են առնում մի քանի հյուսիս հոսող վտակներ, իսկ Հարսնաքար լեռում՝ Գնիշիկ գետը, որը խառնվում է Ամաղու գետին:

«Գնիշիկ» տեղամասի մեծ մասը կազմում են լեռնատափաստանները: Բարձրադիր հատվածներում դրանք փոխարինվում են մարգատետնային լեռնատափաստաններով:

Գնիշիկ գետի ձախափնյա լանջերը, Ամաղու գետի կիրճը ինչպես նաև Գանձակ լեռան հյուսիսային լանջերը տեղամասի սահմաններում ներկայացված են ժայռերով և ժայռոտ զառիթափերով: Տեղամասի հըուսիսային կողմնադրության լանջերը ծածկված են գլիհու նոսր անտառով:

«Գնիշիկ» տեղամասի հողատարածքները գտնվում են Գնիշիկ և Մոզրով համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2919.03 հա:

1.2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման ընդհանուր նպատակը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման հիմնական նպատակն է չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային էկոհամակարգերի, մարդու կողմից ստեղծված և ավանդական օգտագործվող լանդշաֆտների, բուսական և կենդանական հազվագյուտ և էնդեմիկ տեսակների պահպանությունն է և կայուն օգտագործումը:

1.3. Ազգային համատեքստ


Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները, որոնք ներկայացված են պետական արգելոցներով (3), ազգային պարկերով (4), պետական արգելավայրերով (27) և բնության հուշարձաններով (230), կազմում են մոտ 380000 հա, ՀՀ տարածքի 13% (տես՝ քարտեզ 2) (հանրապետության ցամաքային մակերեսի 8.7% և Սևանա լճի հայելու մակերեսի 4.3%). *Պետական արգելոցները* (IUCN-ի I կատեգորիա) ունեն բնապահպանական ամենախիստ ռեժիմը, դրանց հաջորդում են *ազգային պարկերը* (IUCN-ի II կատեգորիա), *բնության հուշարձանները* (IUCN-ի III կատեգորիա) և *արգելավայրերը* (IUCN-ի IV կատեգորիա):

Հայաստանում ցամաքային պահպանվող տարածքների գերակշռող մասը անտառածածկ տարածքներն են և մի շարք եզակի էկոհամակարգեր անբավարար չափով են ներկայացված ԲՀՊՏ-ների համակարգում: Դա հատկապես վերաբերում է չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային էկոհամակարգերին, որոնք բնորոշ են Վայոց Ձորի տարածաշրջանի համար:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման

գործակալության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. օգոստոսի 8-ի № 1236-Ն որոշման համաձայն:
Համայնքային պահպանվող տարածքների կառավարումը իրականացվում է համաձայն ՀՀ ԲՀՊՏ-ների մասին օրենքին (2013 թ.):

Քարտեզ 2. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներ



1.4. Բարենպաստ մարտավարություն և օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունը 1991 թվականից սկսած ընդունել է բնապահպանության ոլորտը կանոնակարգող բազմաթիվ օրենքներ, որոնցից գերակշռող մասը՝ համապատասխան կոնվենցիաներից բխող երկրի ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում: Բնապահպանական օրենսդրական հենքը սկզբունքորեն ձևավորվել է Ռիոյի գագաթաժողովից հետո:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման պլանը մշակվել է հաշվի առնելով սույն մասով ամրագրված իրավական ակտերի պահանջները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածով ամրագրված է, որ. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», 31-րդ հոդվածով ամրագրված է, որ. «սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին», 33.2-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել ու բարելավել շրջակա միջավայրը, 48-րդ հոդվածով որպես պետության հիմնական խնդիր ամրագրված է նաև՝ ներկա ու ապագա

սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են բնապահպանության ոլորտը կանոնակարգող 3 օրենսգրքեր ու 12 օրենքներ: Դրանցից կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների ոլորտը կանոնակարգում են.

- 1) "Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը" (2001թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 1992թ-ին),
- 2) "Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը" (2002թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 23.03.1992թ.),
- 3) "Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը (2005թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 1994թ-ին),
- 4) "Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994թ),
- 5) "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին" ՀՀ օրենքը (1995թ),
- 6) "Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին" ՀՀ օրենքը (1998թ),
- 7) "Բուսական աշխարհի մասին" ՀՀ օրենքը (1999թ),
- 8) "Կենդանական աշխարհի մասին" ՀՀ օրենքը (2000թ),
- 9) "Սևանա լճի մասին" ՀՀ օրենքը (2001թ),
- 10) "Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման տարեկան ծրագիր" ՀՀ օրենքը (2001թ),
- 11) "Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր ծրագիր" ՀՀ օրենքը (2001թ),
- 12) "Բնապահպանական վերահսկողության մասին" ՀՀ օրենքը (2005թ.),
- 13) "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2013 թ),
- 14) "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը (2006թ),
- 15) "Ուրսի և որսորդական տնտեսության վարման մասին" ՀՀ օրենքը (2007թ):

Բացի վերոնշյալ օրենսդրական ակտերից կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների ոլորտը կանոնակարգում են նաև ՀՀ քաղաքացիական, վարչական, քրեական օրենսգրքերը, ինչպես նաև "Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին" ՀՀ օրենքը, "Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին" ՀՀ օրենքը, "Հասարակական կազմակերպությունների մասին" ՀՀ օրենքը:

Բացի հիշատակված օրենքներից, ինչպես նաև դրանց շրջանակներում ընդունված ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանության ոլորտը կանոնակարգվում է բազմաթիվ ստանդարտներով ու տեխնիկական կանոնակարգերով:

1990-ական թվականներին Հայաստանը միացել է կենսաբազմազանության պահպանության մի շարք միջազգային պայմանագրերի՝ կոնվենցիաների և համաձայնագրերի և ստանձնել է դրանցով ամրագրված պարտավորությունները, մասնավորապես.

- 1) "Միջազգային կարևորության ջրաճահճային տարածքների, հատկապես որպես ջրով թռչունների բնադրավայր" կոնվենցիա (Ռամսար, 1971թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:

- 2) «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (CBD, Ռիո դե Ժանեյրո, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թ-ին:
- 3) «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:
- 4) «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1997 թ-ին:
- 5) «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:
- 6) «Բուսական և կենդանական աշխարհի վայրի անհետացող տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES, Վաշինգտոն, 1973 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:
- 7) «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:
- 8) «Վայրի կենդանիների միգրացիա կատարող տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2010 թվականին:

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների շրջանակներում՝ Հայաստանը հրատարակել է «Հայաստանի կենսաբազմազանություն. Առաջին ազգային զեկույց»-ը և մշակել է «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը:

«Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը ներկայացնում է կենսաբազմազանության պահպանության ազգային ռազմավարությունը, առանձնացնում է ռազմավարությունն իրականացնելու համար առաջնահերթությունները և դրանք ամբողջացնում է կայուն զարգացման պլանների և այլ համապատասխան նախագծերի և ծրագրերի հետ: «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը հիմք է հանդիսանում բնության արդյունավետ և միասնական պահպանության համար՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-տնտեսական իրավիճակը և պարունակում է կենսաբազմազանության պահպանության, կայուն զարգացման և վերականգնման համար անհրաժեշտ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները:

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածը անդամ երկրներին պարտավորեցնում է.

- 1) ստեղծել պահպանվող տարածքների ցանց՝ ընդգրկելով երկրի համար բնորոշ բոլոր ցամաքային և ջրային էկոհամակարգերի մոդելային տարածքները,
- 2) մշակել ուղեցույց՝ պահպանվող տարածքներն ընտրելու, ստեղծելու և կառավարելու համար,
- 3) խթանել էկոհամակարգերի, բնական ապրելավայրերի պահպանությունն ու պահպանել բնական միջավայրում բնակվող բուսական և կենդանական կենսունակ պոպուլյացիաները,

- 4) կենսաբազմազանության պահպանության համար կարևոր կենսաբանական ռեսուրսների կառավարում կամ ղեկավարում՝ ապահովելով դրանց պահպանությունն ու կայուն օգտագործումը,
- 5) վերականգնել դեգրադացված էկոհամակարգերն ու խթանել անհետացող տեսակների վերականգնումը, մշակել անհրաժեշտ օրենսդրական ակտեր և մեխանիզմներ ու իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ վտանգված տեսակների և պոպուլյացիաների պահպանության համար:

1. 5. Սահմանների նկարագրություն և հանգուցային սահմանակետեր

Այս բաժինը նկարագրում է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համապատասխան տեղամասերի հանգուցային սահմանակետերի միջոցով զատված սահմանները: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի սահմանազատման գործընթացն իրականացվել է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի պահպանման գոտուն կից գտնվող բոլոր համայնքների հետ սերտ համագործակցությամբ: Սահմանների հետ կապված բոլոր հարցերը պարզվել են մասնակցային պլանավորման գործընթացի միջոցով:

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի » և Գնիշիկ գյուղական համայնքի սահմանային «Ա» հանգուցային կետից, որի կոորդինատներն են՝ ($y=8519858.4378$, $x=4396481.3978$) սահմանագիծը թեքվելով դեպի հյուսիս-արևելք լանջերի վրայով, անցնելով 690մ հասնում է թամբի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, որից հետո քիչ թեքվելով դեպի արևելք և անցնելով 666.41մ հասնում է թամբի վրայի թիվ 2 սահմանակետին, որից հետո կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, հատելով մոտակա ձորակները և անցնելով 633.03մ հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին և նորից փոխելով ուղղությունը դեպի արևելք լանջերի և թամբերի վրայով հատելով մոտակա ձորակները և անցնելով 471.64մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 4 սահմանակետին ու նորից շարունակվելով նույն ուղղությամբ հատելով ձորը, այնուհետև դաշտային ճանապարհը և անցնելով 408.31մ, քիչ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք հասնում է թիվ 5 սահմանակետին ու նորից փոխելով ուղղությունը դեպի հյուսիս անցնելով 317.85մ հասնում է լանջի վրայի թիվ 6 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք հատելով դաշտային ճանապարհը, այնուհետև ձորը, անցնելով 419.31մ հասնում է լանջի վրայի թիվ 7 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8522475.8371$, $x=4397482.1036$) և կտրուկ փոխելով ուղղությունը, շարունակելով դեպի հարավ-արևելք անցնելով 157.05մ հասնում է դիմացի լանջի վրայի թիվ 8 սահմանակետին: Այդտեղից շարունակվելով և կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, ապա արևելք, հատելով դաշտային ճանապարհը թիվ 9-10 սահմանակետերի վրայով անցնելով 1144.83մ հասնում է 1359.3մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին, որից հետո փոխելով ուղղությունը

դեպի հարավ-արևելք, այնուհետև արևելք հատելով ձորը քիչ շեղելով ուղղությունը դեպի հյուսիս -արևելք անցնելով 485.47մ, հասնում է լանջի վրայի թիվ 15 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8524131.4796$, $x=4397349.5772$): Այդտեղից սահմանագիծը ուղղությունը կտրուկ փոխելով դեպի հարավ, թամբերի և լանջերի վրայով հատելով ձորը անցնելով 401.61մ հասնում է լանջի վրայի թիվ 16 սահմանակետին, շարունակվելով նույն ուղղությամբ դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք անցնելով 400.18մ հասնում է լանջի վրայի թիվ 17 սահմանակետին և նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ անցնելով 258.01մ հասնում է թամբի վրայի գտնվող 1463.1մ նիշ ունեցող թիվ 18 սահմանակետին, ապա փոխում է ուղղությունը դեպի հարավ-արևմուտք անցնելով 399.20մ հասնում է 1950.4մ նիշ ունեցող թիվ 19 սահմանակետին, ու նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ անցնելով 66.28մ հասնում է թիվ 20 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը շարունակվելով դեպի հարավ-արևմուտք լանջերի վրայով հատելով մոտակա ձորակը, այնուհետև դաշտային ճանապարհը անցնելով 376.73մ հասնում է թամբի վրա գտնվող 1850.5մ նիշ ունեցող թիվ 21 սահմանակետին, որից հետո շարունակվելով դեպի հարավ-արևելք լանջերի վրայով հատում է թիվ 22 սահմանակետը, քիչ փոխելով ուղղությունը դեպի հարավ և անցնելով 506.28մ հասնում է լանջի վրայի թիվ 23 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևմուտք գազաթի ջրբաժանով անցնելով 241.78մ հասնում է լանջի վրայի թիվ 24 սահմանակետին ու նորից շարունակվելով և փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ և անցնելով 470.31մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 25 սահմանակետին, որից հետո շարունակվելով և փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք հատելով լանջի վրայի թիվ 26 սահմանակետը, և անցնելով 912.61մ հասնում է լանջի վրայի թիվ 27 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը նորից փոխելով ուղղությունը դեպի հյուսիս ռելեֆի բնորոշ կետերով, հորիզոնականներին զուգահեռ անցնելով 432.45մ հասնում է լանջի վրայի թիվ 28 սահմանակետին, որից հետո նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևելք, ատելով մոտակա ձորակները և անցնելով 889.95մ լանջերի վրայով հասնում է ձորից քիչ վերև գտնվող լանջի վրայի թիվ 29 սահմանակետին: Շարունակվելով փոխելով ուղղությունը դեպի հարավ, այնուհետև արևելք հատելով դաշտային ճանապարհը և անցնելով 406.62մ հասնում է ձորի վրայի գտնվող թիվ 30 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8526308.7761$, $x=4395067.8275$), որից հետո կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ, այնուհետև հարավ-արևմուտք անցնելով 603.32մ հասնում է լանջի վրայի, ճանապարհի շրջադարձի 2025.6մ նիշ ունեցող թիվ 31 սահմանակետին: Այդ կետից սահմանագիծը դաշտային ճանապարհով շարունակվելով դեպի հարավ, ապա հարավ- արևելք անցնելով 879.23մ հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 32 սահմանակետին, քիչ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք անցնելով 141.77մ հասնում է լանջի վրայի թիվ 33 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=856259.4489$, $x=4393545.6125$) ու կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-

արևմուտք հատում է 2190.8մ նիշ ունեցող գագաթը, նորից քիչ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք անցնելով 166.30մ հատելով դաշտային ճանապարհը հասնում է լանջի վրա գտնվող թիվ 34 սահմանակետին, որից հետո կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս, հյուսիս-արևմուտք լանջերի վրայով հատելով ձորակները հորիզոնականներին զուգահեռ անցնելով 589.92մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 35 սահմանակետին: Այնուհետև կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք այնուհետև հարավ անցնելով 927.70մ հասնում է լանջի վրայի թիվ 36 սահմանակետին ու նորից փոխելով ուղղությունը հարավ-արևմուտք, հատելով ձորը այնուհետև դաշտային ճանապարհը անցնելով 335.63մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 37 սահմանակետին: Սահմանագիծը այդտեղից փոխելով ուղղությունը դեպի հարավ, որից հետո արևմուտք ու նորից հարավ ձորին և հորիզոնականներին զուգահեռ, անցնելով 633.90մ հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8523977.4746$, $x=4392700.6578$) և նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ձորակը որոշ տեղերում ձորին զուգահեռ, անցնելով 1322.58մ հասնում է լանջի վրայի թիվ 39 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8522801.5048$, $x=4393305.8992$) և նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք և հարավ հատելով ձորը, անցնելով 230.82մ հասնում է ձորի մեջ գտնվող լանջի ստորոտի թիվ 40 սահմանակետին, այդտեղից սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք ձորին և հորիզոնականների զուգահեռ ռելեֆի բնորոշ կետերով հատելով ձորը և անցնելով 1331.78մ հասնում է լանջի վրայի թիվ 41 սահմանակետին և կտրուկ փոխելով ուղղությունը հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք ձորով անցնելով 2033.36մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 42 սահմանակետին, շարունակվելով դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք լանջի վրայով, հորիզոնականներին զուգահեռ, հատելով ձորակը, անցնելով 891.90մ հասնում է հաջորդ ձորակի մեջ գտնվող թիվ 43 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8526035.6512$, $x=4390622.4627$), որից հետո փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, անցնելով ձորով 669.96մ հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 44 սահմանակետին և նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք, լանջի վրայով հատելով դաշտային ճանապարհը հասնում է լանջի վրայի թիվ 45 սահմանակետին, անցնելով 713.30մ: Այդտեղից սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը հյուսիս-արևելք հատում է դաշտային ճանապարհը, անցնելով 190.73մ հասնում է 2197.7մ նիշ ունեցող բարձրունքից հեռու գտնվող թիվ 46 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8526076.9470$, $x=4389640.7421$): Սահմանագիծը այդտեղից ուղղությունը փոխում է դեպի հարավ-արևելք, անցնելով 100.05մ հասնում է թիվ 47 սահմանակետին ու նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ լանջի վրայով հորիզոնականներին զուգահեռ հատում է ձորը անցնելով 635.77մ հասնում է թամբի վրա գտնվող ձորից քիչ վերև թիվ 48 սահմանակետին, որից հետո շարունակվելով ձորով դեպի հարավ անցնելով 407.83մ հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 49 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8526274.4269$, $x=4388554.1370$): Շարունակվելով և թեքվելով հարավ-արևմուտք

ռելեֆի բնորոշ կետերով հատելով թիվ 50-51 սահմանակետերը, անցնելով 935.64մ հասնում է թիվ 52 սահմանակետին, այդտեղից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք անցնելով 661.20մ հասնում է գագաթի վրա գտնվող «Բ» հանգուցային սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8524849.2828$, $x=4388049.8070$):

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի և Գնիշիկ գյուղական համայնքի» սահմանային «Ա-Բ» հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 26276.75մ է:

Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի, Գնիշիկ և Խաչիկ գյուղական համայնքների սահմանային «Բ» հանգուցային կետից սահմանագիծը թեքվելով դեպի հարավ-արևելք հատելով ձորակները, անցնելով 1202.43մ բարձրանում և հասնում է Վայքի լեռնաշղթայի վրա գտնվող թիվ 1 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8525139.9141$, $x=4386883.0283$) ու կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևմուտք Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի ինքնավար Հանրապետության Պետական սահմանանով անցնելով 3542.25մ հասնում է սահմանագծի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8521619.8790$, $x=4386699.4957$): Այդտեղից սահմանագիծը փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք ռելեֆի բնորոշ կետերով, հատելով թիվ 4-8 սահմանակետերը, անցնելով 1531.15մ հասնում է թիվ 9 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8522673.9920$, $x=4387661.6314$), որից հետո փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևմուտք, այնուհետև հարավ և նորից հատելով թիվ 10-19 սահմանակետերը, անցնելով 2050.07մ հասնում է թամբի վրայի թիվ 20 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8521957.2651$, $x=4388073.5547$), շարունակվելով դեպի արևելք, ապա հյուսիս-արևմուտք և մերթ ընդ մերթ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք ռելեֆի բնորոշ կետերով թամբերի և լանջերի վրայով, անցնելով 2746.12մ հատելով հասնում է դաշտային ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 30 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8520577.8322$, $x=4389807.6903$): Սահմանագիծը շարունակվելով դաշտային ճանապարհով, այնուհետև բարձրանալով հյուսիս-անելք լանջերի և թամբերի վրայով մերթ ընդ մերթ փոխելով ուղղությունը հյուսիս-արևմուտք ու նորից հյուսիս հատելով թիվ 31-35 սահմանակետերը, անցնելով 1829.4մ հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 36 սահմանակետին: Այդտեղից սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ հատելով դաշտային ճանապարհը և անցնելով 146.66մ հասնում է թիվ 37 սահմանակետին ու նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս լանջ վրայով, անցնելով 168.84մ հասնում է թամբի վրայի թիվ 38 սահմանակետին, որից հետո փոխելով ուղղությունը դեպի արևելք և անցնելով 320.12մ հասնում է 2279.1մ նիշ ունեցող թիվ 39 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8521404.1282$, $x=4390871.6262$): Շարունակվելով և կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս, հատելով դաշտային ճանապարհը և անցնելով

368.01մ հասնում է թամբի վրայի թիվ 40 սահմանակետին և նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը և անցնելով 572.06մ, թիվ 41 սահմանակետով հասնում է թիվ 42 սահմանակետին, այդտեղից կտրուկ փոխելով դեպի հյուսիս լանջի վրայով, հորիզոնականներին զուգահեռ, անցնելով 445.41մ հասնում է թիվ 43 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8521005.1931$, $x=4391357.0438$) և և նորից անմիջապես թեքվելով դեպի արևելք և անցնելով 162.64մ հասնում է թիվ 44 սահմանակետին: Սահմանագիծը շարունակվելով և թեքվելով դեպի հյուսիս-արևելք լանջի վրայով իջնելով ցած հասնում է ձորի վրայի 2305.1մ նիշ ունեցող թիվ 45 սահմանակետին, անցնելով 355.56մ: Այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, այնուհետև նորից թեքվելով հյուսիս-արևմուտք հատելով թիվ 46-47 սահմանակետերը և անցնելով 1236.2մ հասնում է լանջի վրայի թիվ 48 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ-արևմուտք հասնելով դաշտային ճանապարհին, շարունակվում է դաշտային ճանապարհին զուգահեռ դեպի արևմուտք, հատելով 49-51 սահմանակետերը և անցնելով 3285.94մ հասնում է ճանապարհների միացման տեղում գտնվող թամբի վրայի թիվ 52 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8516910.1845$, $x=4392569.9779$): Այնուհետև շարունակվելով դաշտային ճանապարհով դեպի հարավ-արևմուտք հատում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 53 սահմանակետը և անցնելով 652.15մ և մերթ ընդ մերթ փոխելով ուղղությունը դեպի արևմուտք, ապա հարավ հասնում է ճանապարհից քիչ հեռու գտնվող թիվ 54 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8517182.9915$, $x=4392021.5688$): Այնուհետև փոխելով ուղղությունը, սահմանագիծը հատելով ձորը անցնելով 1665.87մ, թիվ 55-57 սահմանակետերի վրայով, մերթ ընդ մերթ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, հյուսիս և նորից հարավ-արևմուտք հասնում է թիվ 58 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8515769.3106$, $x=4391166.7725$): Շարունակվելով և թեքվելով դեպի արևելք թամբերի և լանջերի վրայով, անցնելով 823.88մ հասնում է լանջի վրայի թիվ 59 սահմանակետին, որից հետո կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս և անցնելով 340.71մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 60 սահմանակետին: Այնուհետև կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևելք և անցնելով 199.41մ հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8516897.8945$, $x=4391282.5188$): Հատելով ձորակը, թեքվելով դեպի հարավ, բարձրանալով լանջի վրայով հասնում է թիվ 62 սահմանակետին, շարունակվելով նույն ուղղությամբ հատում է ձորը և անցնելով 1179.56մ հասնում է լանջի վրայի թիվ 63 սահմանակետին և նորից թեքվելով դեպի հարավ-արևմուտք, այնուհետև արևմուտք անցնելով 905.69մ հասնում է պետական սահմանի վրա գտնվող թիվ 64 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8515751.1972$, $x=4389944.1177$): Շարունակվելով սահմանագիծը Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի ինքնավար հանրապետության պետական սահմանով և թեքվելով դեպի հյուսիս անցնելով 790.69մ հասնում է թիվ 65 սահմանակետին ու նորից կտրուկ թեքվելով դեպի

արևմուտք և անցնելով 1285.35մ հասնում է լանջի վրայի թիվ 66 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8514792.5239$, $x=4391104.5317$): Այդտեղից սահմանագիծը շարունակվելով դեպի հյուսիս՝ պետական սահմանով հասնում է թիվ 67 սահմանակետին, հատում է այն և անցնելով 2692.91մ հասնում է թիվ 68 սահմանակետին, որը գտնվում է պետական սահմանի վրա, որի կոորդինատներն են՝ ($y=8515708.3939$, $x=4393404.7641$): Այնուհետև կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևելք սահմանագիծը հատում է դաշտային ճանապարհը և քիչ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք միանում է դաշտային ճանապարհի ոլորանին, այնուհետև շարունակվելով նույն ուղղությամբ դեպի արևելք հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 69 սահմանակետին, անցնելով 1132.73մ: Հատում է թիվ 69 սահմանակետը մերթ Ընդ մերթ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք, այնուհետև հյուսիս-արևմուտք ու նորից արևելք հասնում է ձորին, կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս, ձորով շարունակվելով և փոխելով ուղղությունը հյուսիս-արևելք և անցնելով 561.78մ հասնում է լանջի վրայի թիվ 70 սահմանակետին: Այդտեղից փոխելով ուղղությունը դեպի արևելք հատում է ձորը, հորիզոնականներին զուգահեռ լանջի վրայով հասնում է թիվ 71 սահմանակետին, շարունակվելով դեպի արևելք և անցնելով 667.34մ հասնում է ճանապարհի ոլորաններին գտնվող թիվ 72 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8517638.5266$, $x=4393702.4189$) որից հետո սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը հարավ-արևմուտք անցնելով 231.30մ հասնում է թիվ 73 սահմանակետին ու նորից փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք լանջերի վրայով հատելով թիվ 74-75 սահմանակետերը, անցնելով 847.92մ հասնում է լանջի վրայի թիվ 76 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8517872.0942$, $x=4392961.0769$): Այնուհետև շարունակվելով և փոխելով ուղղությունը, սահմանագիծը անցնում է հորիզոնականներին զուգահեռ անցնելով 269.74մ հասնում է թամբի վրայի թիվ 77 սահմանակետին ու կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս թամբի վրայով իջնելով հատելով թիվ 78 սահմանակետը, փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք և անցնելով 651.32մ հատելով ձորը հասնում է ձորից քիչ վերև գտնվող լանջի վրայի «Գ» հանգուցային կետին, որի կոորդինատներն են՝ ($y=8518139.2802$, $x=4393629.5096$):

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի » և Խաչիկ գյուղական համայնքի սահմանային «Բ-Գ» հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 34861.14մ է:

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի » Գնիշիկ և Արենի գյուղական համայնքների հանգուցային «Ա» սահմանակետից սահմանագիծը թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք հասնում է 1839.4մ նիշ ունեցող զագաթին, այնուհետև քիչ թեքվելով դեպի հարավ-արևմուտք շղթայի զագաթների վրայով հասնում է 1817.0մ նիշ ունեցող զագաթին, շարունակվելով նույն ուղղությամբ և անցնելով 809.65մ հասնում է 1814.8մ նիշ ունեցող թիվ 1 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8519052.6031$,

$x=4396402.8647$): Շարունակվելով և թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք թամբերի և լանջերի վրայով սահմանագիծը անցնելով 1329.28մ հասնում է թամբի վրայի թիվ 2 սահմանակետին ու կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևմուտք իջնում և հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, անցնելով 424.87մ և նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ, ձորով այնուհետև լանջի վրայով հատելով հանդիպակաձ ձորակները և անցնելով 1729.25մ հասնում է լանջի վրայի թիվ 4 սահմանակետին : Շարունակվելով նույն ուղղությամբ հորիզոնականներին զուգահեռ մերթ քմերթ փոխելով ուղղությունը դեպի արևելք, այնուհետև հարավ-արևելք, հարավ-արևմուտք ու նորից հարավ-արևմուտք թամբերի և լանջերի վրայով անցնելով 2085.09մ հասնում է թիվ 5 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8520275.0455$, $x=4394835.3436$): Այդտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ անցնելով 544.09մ հատում է ձորը և միանում լանջի վրայի թիվ 6 սահմանակետին ու նորից թեքվելով դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք հորիզոնականներին զուգահեռ հատելով հանդիպակաց ձորակները հատելով 7-10 սահմանակետերը և անցնելով 4444.75մ հասնում է ժայռի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Շարունակվելով և փոխելով ուղղությունը դեպի հարավ ժայռի եզրով հատելով թիվ 12 սահմանակետը հորիզոնականներին զուգահեռ հասնում է թիվ 13 սահմանակետին, անցնելով 2598.61մ ու նորից փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք անցնելով 329.95մ հասնում է թամբի վրայի 1486.0մ նիշ ունեցող թիվ 14 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8518336.9729$, $x=4395148.9954$), ու նորից անմիջապես փոխելով ուղղությունը հարավ-արևելք հասնում է ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 15 սահմանակետին, անցնելով 251.13մ: Այդտեղից սահմանագիծը փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք հատելով թիվ 16 սահմանակետը փոխելով ուղղությունը դեպի հարավ Ամաղու գյուղի սահմանագծով հասնելով և հատելով թիվ 17 սահմանակետը, փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք հատելով գյուղ մտնող ճանապարհը անցնելով 1615.71մ հասնում է լանջի վրա գտնվող թիվ 18 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y=8517901.0108$, $x=4394107.6490$): Այդտեղից սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը հարավ-արևելք թամբի վրայով հատելով գյուղ մտնող ճանապարհը հասնում է լանջի վրայի «Գ» հանգուցային սահմանակետին անցնելով 534.22մ: «Գ» հանգուցային սահմանակետի կոորդինատներն են՝ ($y=8518139.2802$, $x=4393629.5096$):

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի և Արենի գյուղական համայնքի» «Ա-Գ» հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 16696.30մ է:

Արենիի տեղամաս II հատված

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի» և Արենի գյուղական համայնքի հողօգտագործության մեջ գտնվող II հատվածի սահմանային թիվ 1 սահմանակետից, որի կոորդինատներն են՝ ($y=8516053.2982$, $x=4398186.1386$), սահմանագիծը

թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 20.36մ հասնում է թիվ 2 սահմանակետին և կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս և անցնելով 27.03մ հասնում է թիվ 3 սահմանակետին: Անմիջապես նորից փոխելով ուղղությունը արևմուտք թիվ 4-5 սահմանակետերի վրայով, անցնելով 31.54մ հասնում է թիվ 6 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8515997.2161$, $x = 4398208.7208$): Այդտեղից սահմանագիծը կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևելք և հետո հարավ հատելով թիվ 7 սահմանակետը և անցնելով 43.08մ հասնում է թիվ 8 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8516008.2610$, $x = 4398168.9964$): Շարունակվելով և փոխելով ուղղությունը դեպի հարավ և հետո արևելք թիվ 9-10 սահմանակետերի վրայով, անցնելով 54.69մ հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8516053.2982$, $x = 4398186.1386$) և նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս, դաշտային ճանապարհով, անցնելով 27.98մ հասնում է թիվ 1 սահմանակետին:

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի» Արենիի համայնքի տարածքում գտնվող II հատվածի ընդհանուր երկարությունը՝ (1-1) կազմում է 204.68մ:

Արենիի տեղամասի III հատված

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի» և Արենի գյուղական համայնքի հողօգտագործության մեջ գտնվող III հատվածի սահմանային թիվ 1 սահմանակետից, որի կոորդինատներն են՝ ($y = 8516058.2559$, $x = 4398189.5448$), սահմանագիծը թեքվելով հյուսիս-արևելք, անցնելով 41.93մ հասնում է թիվ 2 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8516033.2488$, $x = 4398189.6922$), անմիջապես կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս հատելով թիվ 3 սահմանակետը և անցնելով 34.73մ հասնում է թիվ 4 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8516080.8903$, $x = 4398226.4177$): Այդտեղից սահմանագիծը նորից կտրուկ փոխելով ուղղությունը դեպի արևմուտք հատում է լանջի վրայի թիվ 5 սահմանակետը և անցնելով 35.3մ հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ ($y = 8516046.7697$, $x = 4398220.1805$): Շարունակվելով և փոխելով ուղղությունը դեպի հարավ, անցնելով 32.72մ, դաշտային ճանապարհով հասնում է թիվ 1 սահմանակետին:

«Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի» Արենիի համայնքի տարածքում գտնվող III հատվածի ընդհանուր երկարությունը՝ (1-1) կազմում է 144.68մ:

1.6. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բնական պայմանները

1.6.1. Կլիման

Կլիմայի յուրահատկությունները խիստ կապված են լանդշաֆտային գոտիականությունից:

Կիսաանապատային գոտում կլիման ընդհանուր առմամբ չոր ու խիստ ցամաքային է, չափավոր ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Բացարձակ ջերմաստիճանների տատանումները կարող են հասնել մինչև 69 աստիճանի: Սառնամանիքները տևում են ընդամենը 4-5 ամիս՝ նոյեմբերի կեսերից մինչև ապրիլի կեսերը, իսկ երբեմն նույնիսկ ավելի պակաս: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը չի անցնում 400 մմ-ից, այն էլ թափվում է գլխավորապես անձրևների ձևով, ըստ որում առավելագույնը դիտվում է գարնանը (մայիսին՝ 54 մմ): Հորդ անձրևաջրերից առաջացած հոսքերը զառիթափ լանջերից անմիջապես քշում տանում են հողմահարված ապառները, հաճախ առաջացնելով սելավներ ու մերկացնելով մայր ապառների դեռ չհողմահարված նոր շերտեր:

Մթնոլորտային տեղումների քանակը անբավարար է, այդ իսկ պատճառով զարգանում են միայն չոր-տափաստանային լանդշաֆտներ: Լերկ, ժայռոտ զառիթափ լեռնալանջերի և բարձր ջերմաստիճանի պատճառով տեղումների զգալի մասը արագ գոլորշիանում է, մնացածն էլ հեռանում մակերևութային հոսքի միջոցով: Դրան նպաստում են նաև երկրաբանական կառուցվածքը և ապառների ջրամերժ հատկությունը:

Այստեղ երբեմն թափվող ձյունն անմիջապես հալչում է և հաստատուն ձյունածածկույթ չի լինում, միայն որոշ տարիներին գոյանում է ոչ այնքան հաստ ձյունաշերտ, լավագույն դեպքում նստելով 1-2 ամիս:

Չոր տափաստանային լանդշաֆտների կլիման չոր ցամաքային է, չափավոր ցուրտ ձմեռներով և տաք ամառներով, օդի միջին ջերմաստիճանը հունվարին -4.4°C է, օգոստոսին՝ 24.4°C , օրական տատանումները նույնպես մեծ են: Ջերմաստիճանի մեծ տատանումները նպաստում են ապառների ուժգին ֆիզիկական հողմահարմանը, այստեղ մայր ապառները փշրվելով ու մանրանալով, վեր են ածվում ավազի ու խճի: Հողմահարման այդ պրոցեսը բավական երկար է տևում: Հորդ ու կարճատև անձրևների ժամանակ այդ պրոցեսը փոխարինվում է դենտոպցիայով: Տեղումների տարեկան քանակը փոքր ինչ ավելի է (500 մմ), քան կիսաանապատային գոտում, սակայն այստեղ նույնպես զգացվում է ջրի պակաս, քանի որ տեղումներից առաջացած ջրերը շատ արագ հեռանում են տեղանքի մեծ թեքությունների պատճառով, կամ էլ ներծծվում են և բխում աղբյուրների ձևով՝ գոտու սահմաններից դուրս:

Լեռնատափաստանային գոտու համար բնորոշ է բարեխառն ցուրտ լեռնային կլիման, երկարատև ու ցուրտ ձմեռով: Ռելիեֆի փակ գոգավորություններում այն դաժան է՝ հաճախ կրկնվող սառնամանիքային եղանակներով: Ամռանը այստեղ տաք է, համեմատաբար խոնավ, լինում են չոր ժամանակաշրջաններ: Սառնամանիքային օրերի թիվը ընդհանուր առմամբ կազմում է 150-180: Օդի ջերմաստիճանի օրական ամսական ու տարեկան տատանումները, որոնց նշանակությունը մեծ է ժամանակակից ֆիզիկաաշխարհագրական պրոցեսների զարգացման համար, ունեն հետևյալ պատկերը: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը 500-600 մմ է,

որից տարվա տաք ժամանակաշրջանին (ապրիլ-հոկտեմբեր) բաժին է ընկնում 300-350 մմ, իսկ ցուրտ ժամանակաշրջանին (նոյեմբեր-մարտ)՝ 200-250 մմ: Գարնանային անձրևները հորդառատ են և ուղեկցվում են ամպրոպներով: Ձմռանը գոյանում է կայուն ձյունածածկ՝ 50-70 սմ հաստությամբ, որը տևում է մոտ 4 ամիս: Առաջին ձյունը թափվում է հոկտեմբերի երկրորդ կեսին, իսկ ձնհալքը սկսվում է ապրիլին:

1.6.2. Ռելիեֆը և հողերը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքը գտնվում է Արփա գետի ձախափնյա մասում, որը տարբերվում է աջափնյա ավազանից: Աջափնյա տարածքի համար բնորոշ են ալիքավոր հրաբխային զանգվածներ, որոնցից դեպի հարավ ձգվող լավային լեզվակները հաճախ առաջացնում են նեղ ու երկար սարավանդներ, գառիթափ լանջեր ունեցող առանձին փոքր լեռնաբազուկներով: Ձախափնյա տարածքները ունեն հին ծալքավոր լեռնային կառուցվածքների գառիթափ, խիստ մասնատված, երբեմն սանդուղքաձև լանջերով լեռնաշղթաներ և մանր ու մեծ լեռնաբազուկներ:

Արփայի հովտի կիսաանապատային գոտում գտնվող հատվածը ներկայացնում է անտեցեղենտ կիրճ (մինչև Արենի գյուղը) բավական բարձր գառիթափ լեռկ քարափային լանջերով, կազմված կրաքարերից ու ավազաքարերից, և արկղաձև հովիտ (Արենիի մոտ և Էրտիչից մինչև Ագարակաձոր գյուղը), լավ արտահայտված ողողատով և կուտակումնային ու Էրոզիոն դարավանդներով: Մեծ զարգացում ունեն վտակների ու ժամանակավոր ջրահոսքերի սելավային պրոյուվիալ արտածման կոները:

Կիսաանապատային գոտու համար բնորոշ ջերմաստիճանի օրական մեծ տատանումների հետևանքով մերկացած ապառները ենթարկվում են ինտենսիվ ֆիզիկական հողմահարման՝ փշրվում ու վեր են ածվում խոշոր քարաբեկորների (կրաքարեր ու ավազաքարեր), սալիկա-թերթաձևի խճի (մերգելներ), ավազի (ավազաքարեր) ու կավի: Դրանք գառիթափ լանջերով տեղատարվում են ցած ու կուտակվում ստորոտում՝ արտածման կոների ձևով, իսկ համեմատաբար թույլ թեքություն ունեցող լանջերին՝ հիմնականում պահպանվում են տեղում: Այս է պատճառը, որ կիսաանապատային գոտում գտնվող լեռնալանջերը ոչ միայն մերկ են ու ժայռոտ, այլև ծածկված են քարային թափվածքներով ու ցրոններով (դելյուվիալ ու կոյուվիալ նստվածքներ):

Չոր տափաստանային գոտու ռելիեֆի ընդհանուր գծերի և ժամանակակից պրոցեսների ընդհանրության (չոր լեռկացած ցածրադիր լեռներ, ռելիեֆի մեծ մասնատում, ինտենսիվ դենուդացիա և այլն) ֆոնի վրա նկատելի է մակերևույթային ձևերի ու տիպերի բազմազանություն, որը պայմանավորված է լիթոլոգիական կազմի խայտաբղետությամբ, երկրաբանական կառուցվածքով և տեղանքի մասնատվածությամբ: Սակայն այդ բազմազանության մեջ ակնհայտ երևում է, որ Արփա գետի ձախափնյակը ներկայացված է չոր լեռկացած (= կմախքային) ցածր լեռներով՝ ի տարբերություն աջափնյակին, որտեղ տարածված են լանջային բեղլենդներ և սարավանդներ: Կմախքային լեռները զբաղեցնում են նեղ շերտ, Արփա գետի նկատմամբ 180-340 մ հարաբերական բարձրությամբ: Այն կրաքարերից

կազմված կառուցվածքային էրոզիոն թեք դարավանդ է, վերին պլիոցենից մնացած հարթեցված մակերևույթ 1250-1350 մ բարձրությամբ: Դարավանդը մասնատված է բազմաթիվ, իրար համարյա զուգահեռ ուղղորդ, ժայռոտ լանջեր ունեցող ձորակներով ու հեղեղատներով, որոնք ձգվում են միջօրեականի ուղղությամբ՝ հարավից հյուսիս:

Լեռնատափաստանային գոտու ռելիեֆը և ապառների լիթոլոգիական կազմը ապահովում է անձրևներից և ձնհալքից առաջացած ջրերի հեռացման եղանակները: Վայքի լեռնաշղթայի հարավային մասերում ջրերը անմիջապես հեռանում են, քանի որ լանջերը թեք են ու կազմված թույլ ջրատար ապառներից (կրաքարեր, ավազաքարեր, կավեր): Սրան հակառակը, հյուսիսային և հյուսիս-արևելյան հրաբխային մասերում, որտեղ ջրամերժ ապառները ծածկված են ջրաթափանց հրաբխային ապառներով, ջրերը հեռանում են ստորերկրյա ճանապարհով՝ մեծ մասամբ աղբյուրների միջոցով:

Տարածքի ամենաբարձր գագաթը Հարսնաքարն է՝ 2773մ բարձրությամբ:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հողաձածկությունն բնորոշ է էրոզիայի բարձր ինտենսիվությունը, հատկապես՝ ցածրադիր կիսաանապատային հողերի գոտում:

Կիսաանապատային դարչնագույն հողերը գտնվում են ցածր լեռնային գոտում, 1000-1400մ բարձրությունների վրա: Աղբատ դարչնագայուն և բաց դարչնագույն հողատեսակները պարունակում են մինչև 0.5% հումուս և հանդիպում են ֆրիգանային բուսածածկությամբ պատված կարբոնացված աղբյուր հարուստ էլովիալ-դելուվիալ նստվածքներ:

Լեռնային շագանակագույն հողերը գտնվում են 1400-ից մինչև 2100մ բարձրության վրա՝ չոր տափաստանային խայտաբղետ խոտածածկությամբ և հացահատիկային բույսերով պատված տարածքների սահմաններում:

Չոր տափաստանային դարչնագույն հողերը բնորոշվում են թույլ քարքարոտ տարրերի առկայությամբ, թեթև մեխանիկական բաղադրիչներով, ամենաբարձր էրոզիայով (մինչև 80%) և ցեմենտավորման բացակայությամբ:

Լեռնային-մարգագետնային հողերը հանդիպում են 2300մ և ավելի բարձրության վրա: Այս հողերը առաջացել են տորֆ գոյացնող հացահատիկային, խայտաբղետ խոտաբույսերի տեսակների ազդեցության արդյունքում:

Հողածածկությունն բնորոշ է էրոզիայի բարձր ինտենսիվությունը, հատկապես՝ ցածրադիր կիսաանապատային հողերի գոտում:

1.6.3. Զրագրությունը

Կիսաանապատային գոտին խիստ աղբատ է գրունտային և մակահոս ջրերով: Միակ գետը այս գոտու համար տարանցիկ Արփան է: Արենի գյուղի մոտ այս գետը ունի 21.3 մ³/վրկ ծախս:

Չոր տափաստանային գոտում Արփան նույնպես գլխավոր գետն է:

Զրաթափանց հրաբխային ապառներով ծածկված լեռնաթափաստանային գոտու մասերում ավելի շատ են համեմատաբար կայուն հոսք ունեցող գետակները, քան հեղեղատները: Սակայն, այս գոտու արևմտյան հատվածներում (որոնք, այդ թվում,

ընկնում են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքի մեջ) ժամանակավոր ջրահոսքերի միջոցով կատարվող էրոզիան գերակշռում է գետային էրոզիային:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտում գտնվող ամենակարևոր վտակները Գնիշիկն ու Գռավն են: Գնիշիկը սկիզբ է առնում Վայոդ Ձորի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2460 մ բարձրությունից և Արենի գյուղից 2.5 կմ դեպի հյուսիս-արևելք միախառնվում է Արփա գետի հետ: Գնիշիկ գետի երկարությունը 24.8 կմ է, ջրհավաք ավազանը՝ 83.5 կմ²: Գետահովիտը V-ձև է և խոր՝ 50-80 մ: Մնուցումը հիմնականում ձնաանձրևային է (74%), վարարումը տեղի ունենում զարնանը: Տարեկան միջին ծախսը 0.2 մ³/վրկ է: Սելավաբեր է, ջուրը օգտագործվում է ոռոգման նպատակով:

Գռավ գետը սկիզբ է առնում Վայոց Ձորի լեռնաշղթայից և Ագարակաձոր գյուղի հյուսիսային մասում ձախից միախառնվում է Արփայի հետ: Երկարությունը 14 կմ է:

1.6.4. Էկոհամակարգերը և բուսական աշխարհը

Էկոհամակարգերը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բուսականությունը շատ փոփոխական է: Կան անտառների մնացորդներ, շիբլյակի համակեցություններ, տափաստաններ, մարգագետին-տափաստաններ, ենթալպյան մարգագետիններ, ենթալպյան բարձրախոտեր, ալպյան մարգագետինների փոքր տարածքներ, խոնավ տարածքների բուսականություն (գետերի երկայնքով, աղբյուրների մոտ, փոքր լճեր) և քարասեր համակեցություններ: Այս բոլոր համակեցությունները ներառում են բազմաթիվ հազվագյուտ, վտանգված և էնդեմիկ բուսատեսակներ: Քարասեր բուսականությունը պետք է հատուկ նշել, քանի որ այդ համակեցություններում հանդիպում են բազմաթիվ նման տեսակներ՝ սրճիկոնդ գեղատես (Hypericum formosissimum), վարդակուկ ոսկեզոց (Rosularia chrysantha), գլխակտուց Կիրպիչնիկովի (Cephalorrhynchus kirpicznikovii), զանգակ Մինստերի (Campanula minsteriana) և շատ այլ տեսակներ:

Բուսականության գոտիները Վայոց ձորում

Բուսականության գոտիներ	Տարածման սահմանները՝ ըստ բարձրության (մ)	Տարածք	
		կմ ²	Վայոց ձորի ընդհանուր տարածքի %
Կիսաանապատային	մինչև 1200-1400	67.50	2.92
Լեռնային-տափաստանային	1200-2300	1,327.60	57.60
Լեռնային-անտառային	1500-2400	85.23	3.68

Ենթալայան և ալպյան	2300 և ավելի	827.50	35.80
Ընդհանուր		2,307.83	100.00

Օշինդրային կիսաանապատը տարածված է 900-1400մ բարձրության վրա և զբաղեցնում է Վայոց ձորի բազմաթիվ դելուվիալ նախալեռները: *Artemisia fragrans* բույսի ծածկը ընդհատվող է և հատուկ չափազանց կարբոնացված չաղակալված գորշ հողերին: Չնայած չոր պայմաններին, այս բուսականությունը բնորոշվում է հարուստ տեսակների միացությամբ (*Caparis spinosa*, *Helichrysum rubicundum*, *Stipa lessingiana*, *Atraphaxis spinosa* ևն):

Տափաստանային գոտին Վայոց ձորին ամենաբնորոշ բուսականության տեսակն է: Այն զբաղեցնում է զգալի տարածություն՝ ներառելով միջին գոտին (1200-2200 մ) և երբեմն հասնում է ծովի մակերևույթից 2600 մ և ավելի բարձրությունների: Այս բուսականությանը հատուկ է ձևավորումների և խմբերի բազմազանությունը: Անկանոն ռելիեֆ ունեցող տարածքներում կան երկրորդական տափաստաններ՝ գոյացած նախկին կաղնու անտառների և բաց գիհու նոսրանտառների (1500-1700 մ) գոտիներում:

Վայոց ձորում տարբերում են լեռնա-տափաստանային բուսականության մի քանի տեսակ. տրագականտներ, փետրախոտեր, չորասեր խայտաբղետ խոտեր և տափաստանային մարգագետիններ: Տրագականտները աճում են 1500-2000 մ բարձրությունների վրա Վարդենիսի և Վայոց ձորի լեռնաշղթաների լանջերի վրա: 1700-1800 մ բարձրությունները չոր տափաստանային են, մինչդեռ փետրախոտային տափաստանները հասնում են 2400 մ-ի և առանձին կտորների տեսքով նաև հանդիպում են ռելիեֆի համեմատաբար հարթ մասերում: Այստեղ գերիշխում են փետրախոտերը (*Stipa tirsia*, *S. capillata*), *Thymus kotschyanus*, *Tanacetum chiliophyllum* և շատ այլ բուսատեսակներ:

Միջին լեռնային գոտուց (2300-2800 մ) վեր տեղակայված է մարգագետնային-տափաստանային գոտին, որտեղ հանդիպում է տափաստանային խոտային բուսականություն՝ ենթալպյան մարգագետնային բույսերի համակցությամբ (*Trifolium ambiguum*, *T. trichocephalum*, *Centaurea* spp. և այլն):

Անտառային բուսականություն: Վայոց ձորում անտառապատ տարածքները քիչ են, թեև դենդրոֆլորայի կենսատեսակները՝ բազմազան: Մարզում հայտնաբերվել է ծառերի և թփերի 155 տեսակ: 13 դաս և 9 ընտանիք ներկայացնող դենդրոֆլորայի 28 տեսակները հազվագյուտ և վտանգված են: Այստեղ կան 18 դասի և 7 ընտանիքի

պատկանող վայրի մրգատու ծառերի 65 տեսակ: Դրանցից ամենա արժեքավոր ու հեռանկարային տեսակներն են հանդիսանում *Amygdalus fenzliana*, *Crataegus spp*, *Elaeagnus orientalis*, *Malus orientalis*, *Pyrus spp.*, *Sorbus spp.* և այլ տեսակներ: Մի քանի տեսակներ (*Prunus mahaleb*, *Sorbus aucuparia*) հանդիսանում են մրգային կուլտուրաների նախնիներ: Որոշ տեսակի մրգերը (*Juglans regia*, *Ziziphus jujuba*, *Elaeagnus orientalis* և այլ) բարձրորակ են, իսկ մյուսները կարող են օգտագործվել որպես հումք պահածոյագործության ոլորտում:

Անտառային բուսականության վերապրուկները ներկայացված են չոր նոսրանտառներով և կաղնու անտառներով:

- Լայնատերև ծառերի նոսրանտառներ: Լայնատերև ծառերի նոսրանտառների վերին սահմանը հասնում է մինչև 1800-2000 մ, թեև դրանք հիմնականում տարածված են միջին լեռնային գոտում (1200-1500 մ): Լայնատերև ծառերի նոսրանտառներում գերակայում են հետևյալ տեսակները. *Amygdalus fenzliana*, *Celtis glabrata*, *Acer ibericum*, *Pistacia mutica*, *Pyrus salicifolia*, և այլն: Թփերից են՝ *Rhamnus pallasii*, *Cerasus incana*, *Spiraea hypericifolia*, *Jasminum fruticans*, *Lonicera iberica* և այլն:
- Բաց գլիու նոսրանտառներ: Էկոլոգիական տեսանկյունից դրանք ամուր կապ ունեն լայնատերև ծառերի նոսրանտառների հետ և հիմնականում ներկայանում են որպես *Juniperus polycarpus*-ի գերակայությամբ նոսրանտառներ, որոնք տարածված են չոր էրոզացված լանջերի վրա: Դրանց բազմաթիվ վերապրուկները գտնվում են չորասեր խոտային – թփուտային սուկցեսիայի տարբեր փուլերում: Նման բաց գլիու նոսրանտառները տարածված են Մարտիրոս և Չայկենդ գյուղերից դեպի հարավ որտեղ տրագականտային տափաստաններում աճում են կենու և լայնատերև թփերի առանձյակներ:
- Կաղնու անտառները տարածված են Արփա և Եղեգիս գետերի ավազանների վերին հատվածներում՝ 1850-2350 մ բարձրությունների վրա որպես հացահատիկային-խայտաբղետ խոտային անտառներ: Այս անտառները առանձնանում են ցածր արտադրողականությամբ: Այստեղ հանդիպում են *Fraxinus excelsior*, *Pyrus syriaca*, *Sorbus aucuparia*, *Sorbus spp.*, *Crataegus spp.*: Կաղնու սերմի վերարտադրությունը բացակայում է:

Ալպյան բուսականություն

Ի տարբերություն Հայաստանի հյուսիսային մարզերի՝ Վայոց ձորում ալպյան գոտին տեղակայված է 2800-2900 մ-ից մինչև 3500 մ բարձրությունների վրա: Վեգետացիոն շրջանը կարճ է: Ալպյան գոտու բուսականության ամենաբնորոշ տիպը կարպետն է, որը հիմնականում տարածված է մարզի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերում: Կարպետներում գերիշխում են վարդաձև տերևներով գաճաճ երկշաքիլավոր

խոտաբույսերը: Հացահատիկային մշակաբույսերը կազմում են ֆիտոցենոզի ավելի փոքր մաս: Վերին ալպյան կարպետները ավելի աղքատ են և գլխավորապես տարանջատված: Հողի ներքին շերտը բարակ է, հաճախ՝ լեռնային և խոնավ: Վայոց ձորի ալպյան կարպետների էփիֆիկատորներն են՝ *Veronica orientalis*, *Taraxacum stevenii*, *Campanula tridentata*, *Carum caucasicum*, *Artemisia splendens* և *Festuca woronowii*:

Ֆրիգանային կամ լեռնային-չորասեր բուսականություն: Այն Հայաստանի ամենաչորասեր (քսերոֆիլ) բուսականությունն է, որը լայնորեն տարածված է Վայոց ձորի կիսաանապատային գոտու (900-1500 մ) չոր քարքարոտ և ժայռոտ լանջերի վրա:

Ֆրիգանային բուսականությունը կապված է չոր նոսրանտառների բուսականության, լեռնային տափաստանի և երբեմն՝ լեռնային անտառների տարածքների հետ: Որքան ավելի չոր և ավելի բարեխառն է կլիման և ուժգին է հողի էրոզիան, այնքան ավելի ֆրիգանային է լանդշաֆտի բուսականությունը: Տարբերում են երեք տիպի ֆրիգանային բուսականություն. ֆրիգանա, տրագականտներ և տոմիլլարներ:

Ֆրիգանայի կտորները հանդիպում են Արենի և Գետափ գյուղերի մոտակայքում (Եղեգնաձորի շրջանում) 900-1200մ բարձրության վրա: Ամենաբնորոշ տեսակները փոքրատերև թփերն են և գաճաճ կամ բարձաճ թփերը, որոնք աճում են չոր քարքարոտ և կմաղքային լանջերի վրա: Ֆրիգանա, փոքրատերև և գաճաճավոր տեսակների մեջ գերիշխում են հետևյալ բույսերը. *Rhanmus pallasii*, *Ephedra procera*, *Cerasus incana*, *Lonicera iberica*, *Cotoneaster* spp. և այլն, ինչպես նաև որոշ փոքր ծառեր և թփեր, ինչպիսիք են՝ *Amygdalus fenzliana*, *Pyrus salicifolia*, *Juniperus polycarpus*, *Celtis glabrata*, *Pistacia mutica*: Բազմաթիվ խոտատեսակները (*Anisantha tectorum*, *Helichrysum rubicundum* և այլն) կազմում են նոսր ծածկույթ:

Տոմիլլարները տարածված են քարքարոտ տեղամասերում՝ Արենի, Գետափ և Վերնաշեն գյուղերի մոտակայքերում: Իսկական թփերը այստեղ ամբողջությամբ բացակայում են, մնացել են միայն առանձին տոմիլլարների կտորներ: Տոմիլլարները պարունակում են տարբեր ցեղերի (*Thymus*, *Zizipfora*, *Senecio*, *Helichrysum*, *Artemesia*, *Hieracium*, *Arhillea* և այլն) չորասեր բույսերի համակեցություններ:

Տրագականտային թփերը իրենցից ներկայացնում են ֆրիգանային բուսականության հատուկ մի ձև՝ ներկայացված *Astragalus* spp., *Acantholimon* spp., *Onobrychis cornuta* և այլ փշավոր տեսակների համակեցություններով, որոնք աճում են չոր քարքարոտ և ժայռոտ լանջերի վրա:

Բուսական աշխարհը

Ըստ գույքագրման տվյալների, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են սնկերի թագավորությանը պատկանող 15 տեսակներ և բույսերի թագավորությանը պատկանող 885 տեսակներ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ֆլորայի խոշոր կարգաբանական միավորները

Խոշոր կարգաբանական միավորները		Ընտանիքների քանակը	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
Թագավորություն	Բաժին			
Սնկեր	Իսկական սնկեր	8	13	15
Բույսեր	Մամռանմաններ	3	3	3
	Չիաձետանմաններ	1	1	3
	Պտերանմաններ	3	4	5
	Մերկասերմեր	2	2	4
	Ծածկասերմեր	80	381	870
Բույսեր՝ ընդամենը		89	391	885
Սնկեր և բույսեր՝ ընդամենը		97	404	900

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքի ֆլորայի ընտանիքների դասավորվածությունը, իր ընդհանուր գծերով, բնորոշ է հնագույն միջերկրածովյան ֆլորաներին, որտեղ բարձր դիրք են գրավում Բարդաձողկավորների և Հացազգիների ընտանիքները, որոնց բազմաձևությունը հիմնականում պայմանավորված է առաջավորասիական տարածում ունեցող տեսակներով: Բարդաձողկավորների, Հացազգիների, Լոբազգիների և Շրթնաձողկավորների տեսակային մեծ բազմազանությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է Հայաստանի ֆլորայի խոշոր ընտանիքների տեսակների քանակի տոկոսին: Հայաստանի ֆլորայի հետ համեմատած բավականին փոքր է Բոշխազգիների տեսակների քանակությունը, որը պայմանավորված է պահպանվող լանդշաֆտի չորային պայմաններով: Որոշ ընտանիքներ, ինչպես օրինակ՝ Թելուկազգիները (Chenopodiaceae), բավական համեստ են ներկայացված ընտանիքների սպեկտրում: Տարածքի բնակլիմայական պայմանները հուշում են, որ այդպիսի ընտանիքների տեսակային բազմազանությունը պետք է ավելի բարձր լիներ: Հավանաբար դա պայմանավորված է տարածքի անբավարար ուսումնասիրվածությամբ:

Ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանների համար լիովին համարժեք է Գազ ցեղի (Astragalus) տեսակների բազմազանությունը՝ 33: Տարածքին համարժեք են նաև հետևյալ տեսակներով համեմատաբար մեծաքանակ, ցեղերը՝ սոխ (Allium), խլածաղիկ (Scrophularia), տերեփուկ (Centaurea), մակարդախոտ (Galium), եղեսպակ (Salvia), ծվծվուկ (Silene), փետրախոտ (Stipa), կորնգան (Onobrychis) և այլն: Որոշ ցեղերի տեսակների քանակը զգալիորեն քիչ է, օրինակ՝ մանուշակ (Viola), մատնունի (Potentilla) ցեղերից միայն մեկական տեսակ է հայտնի պահպանվող լանդշաֆտի տարածքից, որը քիչ հավանական է՝ հաշվի առնելով այս տեսակների համեմատաբար մեծ բազմազանությունը Հայաստանում: Հավանաբար դա նույնպես պայմանավորված է տարածքի անբավարար ուսումնասիրվածությամբ:

Կենսաձևերից պահպանվող լանդշաֆտում են բազմամյա խոտաբույսերը (536), միամյա և երկամյա խոտաբույսերը (239): Թփերը և թփիկները (37), կիսաթփերը և

կիսաթփիկները (35), ծառերը (27) և լիանաները (3) շատ ավելի քիչ են: Ծառերը և լիանաները հիմնականում հանդիպում են ստորին և միջին լեռնային գոտիների գետամերձ անտառներում և նոսրանտառներում: Թփերը և թփիկները հիմնականում հարմարված են միջին լեռնային գոտու նոսրանտառային և տափաստանային համակեցություններում: Կիսաթփերն ու կիսաթփիկները հանդիպում են բոլոր լեռնային գոտիներում, սակայն առավելապես տարածված են տափաստանային համակեցություններում: Բազմամյա խոտաբույսերը հանդիպում են բոլոր լեռնային գոտիներում՝ առավելապես միջին և վերին գոտիներում: Երկամյաններն ու միամյաններն առավելապես հանդիպում են ստորին և միջին գոտիների կիսաանապատային և չոր տափաստանային համակեցություններում:

Ինչ վերաբերվում է Սնկերի թագավորության ներկայացուցիչներին, ապա «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հայտնաբերված բազիդիոմիցետների (Basidiomycota) դասին պատկանող սնկերի տեսակների մի մասի պտղամարմինները աճում են կոճղերի, ծառաբների, փտած փայտի վրա (օրինակ՝ Ականջասունկ սովորական *Pleurotus ostreatus*), մեծ մասը աճում են հողի (օրինակ՝ Շամպինյոն սովորական *Agaricus campestris*), մյուսները՝ հումուսի, խաշամի (օրինակ՝ Կոճղասունկ մարգագետնային *Marasmius oreades*) կամ կենդանիների աղբի վրա (օրինակ՝ Գոմաղբասունկ վաղանցիկ *Coprinus efemerus*): Գաստերոմիցետների (Gasteromicetes) դասի ներկայացուցիչների պտղամարմինները հիմնականում հանդիպում են հողի վրա: Սնկերի մեծ մասը հանդիպում են մարգագետիններում, մի մասը՝ տարբեր տիպի անտառներում կամ դրանց եզրերին ու բացատներում (օրինակ՝ Ձմեռային կոճղասունկ *Flammulina velutipes*), փոքր մասը հանդիպում է տափաստաններում կամ այլ չորային վայրերում (օրինակ՝ Վառողասունկ սևացող *Bovista nigrescens*):

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հայտնի տեսակներից 55-ը (ֆլորայի մոտ 6.1%-ը) գրանցված են 2010 թ. ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 11 տեսակ: Դրանք են՝ Սոխ անհարթացողուն *Allium scabriscapum*, Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տերեփուկ Թամանյանի *Rhaponticoides tamanianae*, Ստեպտորամֆուս Չերեպանովի *Steptorhamphus czerepanovii*, Սոնալրջուն սրապտուղ *Sameraria cardiocarpa*, Սոնալրջուն լրջունատերև *Sameraria glastifolia*, Բոշխ կիլիկիական *Carex cilicica*, Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Սզնի Շովիցի *Crataegus szovitsii*, Ստելերոպսիս Մաղաքյանի *Stelleropsis magakjanii* և Խթանաբույս երկարածաղիկ *Centranthus longiflorus*:

Անհետացող (EN)՝ 35 տեսակ: Դրանք են՝ Սոխ Վորոնովի *Allium woronowii*, Կապնդեղ նրբաճյուղ *Seseli leptocladum*, Տերեփուկ արփայի *Centaurea arpensis*, Ոզնագլխիկ բազմատուն *Echinops polygamus*, Ճուռակախոտ փրչոտ *Hieracium pannosum*, Կղմուխ անցողուն *Inula acaulis*, Կաթնուկ Թախտաջյանի *Lactuca takhtadzhianii*, Տոմանթեա դարեղեզիսի *Tomanthea daralaghezica*, Երուկաստրում Թախտաջյանի *Erucastrum takhtajanii*, Երեքօրնիկ պարսկական *Hesperis persica*, Վահանակերպ տափակապատիճակ *Peltariopsis planisiliqua*, Զանգակ Մինաստերի *Campanula minsteriana*, Մեխակ Լիբանանի *Dianthus libanotis*, Ծվծվուկ Մեյերի *Silene meyeri*, Շնդեղ Նինայի *Colchicum ninae*, Վարդակուկ ոսկեգոծ *Rosularia*

chrysantha, Գազ կորաեղջուրավոր *Astragalus camptoceras*, Գազ չոված *Astragalus divaricatus*, Գազ դարաբաղի *Astragalus karabaghensis*, Գազ կարակուշի *Astragalus karakuschensis*, Գազ արծվասարի *Astragalus montis-aquilae*, Կուրկուրան հիասքանչ *Hedysarum elegans*, Կորնգան Թախտաջանի *Onobrychis takhtajanii*, Գառնաովույտ Կարյագինի *Oxytropis karjagini*, Հացհամեմ աստղաձև *Trigonella astroides*, Հակինթ ատրպատականյան *Hyacintella atropatana*, Սրոհունդ գեղատես *Hypericum formosissimum*, Հիրիկ ատրպատականյան *Iris atropatana*, Հիրիկ գայլականջ *Iris lycotis*, Սագասոխուկ դեղին *Gagea lutea*, Մոլոշիկ Ժերարի *Malvella sherardiana*, Կուժկոտրուկ բրդածաղկաբաժակային *Adonis eriocalycina*, Տանձենի խառնված *Pyrus complexa*, Կտավախոտ մեղրու *Linaria megrica* և Կարմրան ութառէջ *Tamarix octandra*:

Խոցելի (VU)՝ 9 տեսակ: Դրանք են՝ Նարդես Շովիցի *Ferula szowitsiana*, Շարդինիա խոշորապտուղ *Chardinia macrocarpa*, Տերեփան միջանկյալ *Crupina intermedia*, Զանգակ ազգակից *Campanula propinqua*, Ոգնաթուփ մեխակի *Acantholimon caryophyllaceum*, Ցորեն արարատյան *Triticum araraticum*, Քնձմնձուկ իզոպիրոնման *Thalictrum isopyroides*, Ալոճ պոնտական *Crataegus pontica* և Խենոբին գերեյական *Chaenorhinum gerenze*:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են 46 տեսակի էնդեմներ, որոնք տարբերակվում են հետևյալ խմբերի.

1. Հայաստանի էնդեմներ՝ 16 տեսակ, որոնցից Տերեփուկ արփայի *Centaurea arpensis*, Տերեփուկ թամանյանի *Centaurea tamanianae*, Կորնգան Թախտաջանի *Onobrychis takhtajanii* և այլ տեսակները հայտնի են միայն սույն տարածքից: Սրանք հիմնականում աճում են Արենիի, Խաչիկի, Ագարակաձորի շրջակայքերում:
2. Հարավային Անդրկովկասի էնդեմներ՝ 20, որոնցից հիշատակման են արժանի Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Ստելերոպսիս Մադաքյանի *Stelleropsis magakjanii*, Սրոհունդ գեղատես *Hypericum formosissimum* և այլ տեսակները: Վերջիններս հանդիպում են Արենի գյուղի, Գնիշիկի, Խնձորուտի շրջակայքերում:
3. Անդրկովկասի էնդեմներից հայտնի են 6 տեսակ՝ Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տուղտավարդ Սոսնովսկու *Alcea sosnovskyi*, Գազ դարաբաղի *Astragalus karabaghensis* և այլն՝ Խաչիկի և Գնիշիկի շրջակայքերում:
4. Կովկասի էնդեմներից հայտնի են 4 տեսակ՝ Տիվարսակ աջարական *Helictotrichon adjaricum*, Տանձենի Թախտաջանի *Pyrus takhtadzhianii*, Կովացորեն կանաչահասկ *Melampyrum chlorostachyum* և Ալոճ կովկասյան *Crataegus caucasica*՝ Խաչիկի և Գնիշիկի շրջակայքերում:

Պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպող 69 տեսակներ գիտության համար առաջին անգամ նկարագրվել են Հայաստանի տարածքից հայտնաբերված նմուշների հիման վրա (Մեխակ ալեհեր *Dianthus canescens*, Խլածաղիկ ոսկեծաղկային *Schrophularia chrysantha*, Գազ ոսկեգոծ *Astragalus aureus* և այլն): 2 բուսատեսակներ (Ստելերոպսիս Մադաքյանի *Stelleropsis magakjanii*, Գազ ֆեոդորովի *Astragalus fedorovii*) նկարագրված են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքից կատարված հավաքների հիման վրա, իսկ մի քանի այլ տեսակներ նկարագրված են Վայոց Ձորի այլ տարածքներից:

3 տեսակ (Ալոճ Շովիցի *Crataegus szovitsii*, Կուրկուրան հիասքանչ *Hedysarum elegans*, Փսիխրոգեթոն դարադաղյան *Psychrogeton nigromontanus*) Հայաստանում հավաքված են միայն այս տարածքից:

Պահպանվող լանդշաֆտի տարածքում լայն տարածում ունեն ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական և գեղազարդային նշանակության տեսակները, որոնցից շատերը հանդիսանում են մշակովի բույսերի վայրի ցեղակիցներ:

Մսկերից ուտելի են Շամպինյոն սովորականը *Agaricus campestris*, Կաթնասունկ նրբահամը *Lactarius deliciosus*, Անձրևասունկ իսկականը *Lycoperdon perlatum*, Գոմաղբասունկ վաղանցիկը *Coprinus efemerus* և այլն: Ուտելի և համեմունքային բուսատեսակներին պատկանում են Խնկածաղիկ սովորականը *Origanum vulgare*, Ուրց Կոչիին *Thymus kotschyanus*, Ծնեփակ պարսկականը *Asparagus persicus* և այլն, հատիկա-ընդեղայիններից են Ցորեն արարատյանը *Triticum araraticum*, Ոսպ արևելյանը *Lens orientalis* և այլն, պտղա-հատապտղայիններն են պատկանումն Ունաբ սովորականը *Ziziphus jujuba*, Տանձենի Ֆեդորովին *Pyrus fedorovii* և այլն:

Տարածքում բավական հարուստ ներկայացված են արժեքավոր մեղրատու (Տանձենի ուռենատերև *Pyrus salicifolia*, Ալոճ Մեյերի *Crataegus meyeri* և այլն) և դեղատու (Ջրկոտեմ դեղատու *Nasturtium officinale*, Լվախոտ դիզենտերիայի *Pulicaria dysenterica* և այլն) բուսատեսակները: Բավական հարուստ են ներկայացված նաև գեղազարդային (Բոցաթելուկ հայկական *Aethionema armenum*, Արաբախոտ կովկասյան *Arabis caucasica* և այլն), կերային (Աովույտ երկնագույն *Medicago coerulea*, Վիկ կապադոկյան *Vicia cappadocica* և այլն) և տեխնիկական (Բեկտենի սովորական *Frangula alnus*, Տորոն ներկատու *Rubia tinctorum* և այլն) բույսերը, որոնցից վերջիններս իրենց բնույթով հանդես են գալիս որպես ներկատուներ, թելատուներ, եթերայուղատուներ, խեժատուներ և այլն:

Արենի և Խաչիկ գյուղերի միջև ժայռերի վրա աճում է սրճիունդ գեղատես (Hypericum formosissimum) (EN) տեսակը՝ վառ դեղին ծաղիկներով շատ գեղազարդային փոքր բազմամյա բույս: Տեսակը Հայկական Բարձրավանդակի էնդեմ է, հանդիպում է միայն Հարավային Անդրկովկասում և Հյուսիս-Արևյան Անատոլիայում: Այստեղ է հանդիպում նաև ծվծվուկ Մանիսաջյանի (*Silene manissajani*) տեսակը՝ փոքր դեղնավուն ծաղիկներով կաշուն բազմամյա խոտաբույս: Բացի Հարավային Անդրկովկասից այն աճում է նաև Հյուսիսային Անատոլիայում:

Մոզրով և Գնիշիկ գյուղերի մոտ ժայռերի վրա կարելի է հանդիպել ծվծվուկ Մեյերի (*Silene meyeri*) (EN) տեսակը՝ շատ գեղեցիկ փոքր բազմամյա բույս է վարդագույն ծաղիկներով " մահացած տեր"ների կուտակված մնացորդներով ծածկված ցողունի հիմքով: Բացի «Գնիշիկ» արգելավայրից այն աճում է «Խոսրով» արգելոցում և «Արևիկ» ԱՊ-ում:

Մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*)(EN) տեսակը մեխակի ամենագեղեցիկ տեսակներից է: Այն ունի փշոտ տերևներ և կարմիր կետերով ծածկված խոշոր սպիտակ բուրավետ ծաղիկներ: Տեսակը հայտնի է Հայաստանում միայն շատ սակավաթիվ փոքր պոպուլյացիաներից Երևանի և Դարեղեզիսի ֆլորիստիկական շրջանների ցածր լեռնային չոր տարածքներից: Կովկասում այն աճում է միայն Հարավային Անդրկովկասում, Հայաստանում գտնվում է դրա տարածման (Հարավ-Արևմտյան Ասիա) հյուսիսային սահմանը:

Արենի գյուղի մոտ կրաքարային լանջերին աճում է սապնարմատ Թախտաջյանի (*Gypsophila takhtadzhani*) տեսակը՝ բազմամյա բույս է նեղ գծային տերևներով և փոքր

վարդագույն ծաղիկներով. Հայաստանի Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանի տեղային էնդեմ տեսակ է:

Գազ Կարակուշի (*Astragalus karakuschensis*) (EN) տեսակը Հարավային Անդրկովկասի էնդեմ է. այն Հայաստանում աճում է միայն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում և Հայաստանի Երևանի ֆլորիստիկական շրջանում՝ մեկ այլ շատ փոքր պոպուլյացիայի տեսքով: Այս շատ առանձնահատուկ տեսակը հանդիպում է միջին և բարձր լեռնային գոտում՝ կրաքարային լանջերին: Այն ունի հողի տակ գտնվող ընձյուղներ և 5-10 սմ բարձրության բույսերը հաված են սուբստրատին՝ առաջացնելով շատ գեղեցիկ խիտ գորգ: Տեսակի բաժակը փքված է և ծածկված կարմիր ջղերով:

Ստելերոպսիս Մադաքյանի (*Stelleropsis magakjanii*) (CR) տեսակը Հարավային Անդրկովկասի էնդեմ է. այն Հայաստանում աճում է միայն մեկ փոքր պոպուլյացիայում «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում Գնիշիկ և Խաչիկ գյուղերի միջև ընկած հատվածում: Այս գաճաճ կիսաթուփն ունի ուղիղ ճյուղեր, էլիպսաձև տերևներ և գլխիկավոր ծաղկաբույլեր՝ փոքր դեղին ծաղիկներով:

Մեխակ անատոլյան (*Dianthus anatolicus*) տեսակը Կովկասում հանդիպում է միայն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում: Փոքր սպիտակավուն ծաղիկներով այս նրբագեղ մեխակն աճում է ծովի մակարդակից 1900-2100 մ բարձրությունների վրա քարքարոտ և խոտածածկ լանջերին: Տեսակի տարածման հիմնական վայրը Անատոլիան է:

Սզնի Շովիցի (*Crataegus szovitsii*) (CR) տեսակն աճում է Հայաստանում միայն Եղեգնաձոր քաղաքի մոտակայքում: Այս թուփն ունի ամբողջական տերևներ՝ 3-5 բլթերով, թավոտ սպիտակ ծաղիկներով և կարմրավուն կլոր պտուղներով՝ 3-4 կորիզներով:

Խթանաբույս երկարածաղիկ (*Centranthus longiflorus*) (CR) տեսակը շատ գեղեցիկ բազմամյա բույս է մինչև 1 մ բարձրության, երկար հավաքված ծաղկաբույլում մանուշակագույն-կարմիր մեծ ծաղիկներով: Այն աճում է միջին լեռնային գոտու քարքարոտ լանջերին: Վերջին անգամ բույսը Հայաստանում հավաքվել է 1940-ականներին: Տեսակը հանդիպում է Նախիջևանի հարակից տարածքներում և ակնկալվում է, որ նորից կգտնվի «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում:

Ցորեն արարատյանը (*Triticum araraticum*) (VU) վայրի ցորեն է լայն հասկով, որը հեշտորեն բաժանվում է մասերի: Այն Հայաստանում աճում է երեք ոչ մեծ պոպուլյացիաներում: Դրանցից մեկը պահպանվում է «Էրեբունի» արգելոցի տարածքում, մյուսն աճում է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում:

Շատ գեղազարդային կտավատ խտածաղիկ (*Linum densiflorum*) տեսակի հայկական պոպուլյացիաներից մեկը մասամբ գտնվում է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում: Այն ունի խոշոր վարդագույն ծաղիկներ՝ խիտ ծաղկաբույլերում: Տեսակը տարածված է Հարավային Անդրկովկասում, Թալիշում, Արևելյան Անատոլիայում և Հյուսիս-Արևմտյան Իրանում:

Կապնդեղ նրբաճյուղ (*Seseli leptocladum*) (EN) տեսակը Հայաստանի էնդեմ է, որը հանդիպում է միայն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում՝ քարքարոտ և

ժայռոտ լանջերին, միջին լեռնային գոտում: Այս 50-100 սմ բարձրության բազմամյա բույսը ունի արմատամերձ տերևներ գծային ծայրային մասերով, 2-4 շատ անհավասար հովանոցի ճառագայթներ և երկարավուն պտուղներ՝ 5 արտահայտված կողերով:

Վարդակուկ աիզոոն (*Rosularia aizoon*) տեսակը շատ գեղազարդային սուկուլենտ է, որի տերևների վարդակները պահպանվում են ծաղկումից հետո: Ծաղիկները վառ դեղին են: Տեսակը շատ հազվագյուտ է Հայաստանում (միայն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ), նաև տարածված է Անատոլիայում:

Հիրիկ ատրպատականյան (*Iris atropatana*) (EN) տեսակը Հայկական Բարձրավանդակի էնդեմ է, աճում է Հայաստանում Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջանում: Դրա պոպուլյացիայի մի մասը գտնվում է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում: Այս հիրիկի բարձրություն 5-10 սմ է, այն ունի փքված արմատներ և մեծ դեղին ծաղիկներ:

1.6.5. Կենդանական աշխարհը

Հայաստանն այն սակավաթիվ երկրներից է, որտեղ 1 կմ² վրա հանդիպում են կենդանիների ավելի քան 100 տեսակներ, որոնք մշտապես ենթարկվում են մարդածին ազդեցության: Վտանգի ենթարկվող էկոհամակարգերի թվին են պատկանում կիսաանապատները, լեռնատափաստանները ու լեռնային մարգագետինները: Դրանց պահպանությունը և զարգացման ապահովումը «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կարևորագույն նպատակներից մեկն է: Նշված տարածքը հարուստ է կենդանիների հազվադեպ, անհետացման վտանգի տակ գտնվող և էնդեմիկ տեսակներով: Բացի դրանից, պահպանվող լանդշաֆտը աչքի է ընկնում արտագոնալ միջավայրերի (քարանձավներ, չինգիլներ և այլն) մեծ բազմազանությամբ, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է յուրահատուկ, նեղ կենսամիջավայրի հարմարված ֆաունայով: Բացի դրանից, այս պահպանվող տարածքը հանդիսանում է կարևոր միջանցք խոշոր և ակտիվ տեղաշարժվող կենդանիների համար, ինչպիսիք են ընձառյուծը, բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը, գորշ արջը, եվրոպական լուսանը և այլն:

Ըստ նախնական գույքագրման՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են անողնաշար կենդանիներին պատկանող 142 տեսակներ և ողնաշարավոր կենդանիներին պատկանող 241 տեսակներ: Տարածքի կենդանական աշխարհի կարգաբանական խմբերը ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ֆաունայի խոշոր կարգաբանական միավորները

Խոշոր կարգաբանական միավորները		Ընտանիքների քանակը	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
Թագավորություն	Դասեր			
Անողնաշարներ	Փորոտանիներ	10	16	18
	Երկփեղկանիներ	1	1	2
	Միջատներ	34	79	122
Ընդամենը		45	96	142
	Ոսկրային ձկներ	4	7	8

Ողնաշարավորներ	Երկկենցաղներ	4	5	5
	Սողուններ	9	20	23
	Թռչուններ	39	96	166
	Կաթնասուններ	14	38	39
Ընդամենը		70	166	241
Անողնաշարներ և ողնաշարավորներ՝ ընդամենը		115	262	383

Կարգաբանական միավորների վերլուծությունից ակնհայտ է, որ պահպանվող լանդշաֆտի կենդանական աշխարհում գերակշռում են անողնաշարներից Միջատների դասի ներկայացուցիչները, իսկ ողնաշարավորներից՝ Թռչունների: Դա բացատրվում է նրանով, որ պահպանվող լանդշաֆտի տարածքն աչքի է ընկնում էկոլոգիական պայմանների մեծ բազմազանությամբ, պայմանավորված Հայաստանին բնորոշ բոլոր լեռնային գոտիների, կիսաանապատներից մինչև բարձրալեռնայինը, առկայությամբ: Բացի այդ, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքը, իր աշխարհագրական դիրքով, հանդիսանում է կենդանիների միգրացիոն ուղիների կարևոր հատված:

«Գնիշիկ» արգելավայրի թռչունները հիմնականում ներկայացված են լեռնային տափաստանների և ժայռոտ ապրելավայրերի հետ կապված տեսակներով: Արգելավայրի թռչնաֆաունան ներառում է 166 տեսակ, որոնցից մոտ 100-ը այստեղ բնադրում են:

«Գնիշիկ»-ի թռչունների 34 տեսակ գրանցվել են Հայաստանի Կարմիր գրքում, դրանցից 8-ը ընդգրկվել են նաև վտանգված տեսակների միջազգային կարմիր ցուցակում:

Լեռնային տափաստանները հիմնականում բնակեցված են բազմաթիվ ճնճղուկազգիներով, որոնցից են արտույտների, սերինոսների, դրախտապանների տարբեր տեսակները: Դրանցից են երկբծավոր արտույտը (*Melanocorypha bimaculata*), կանեփնուկը (*Carduelis cannabina*), կարմրաթև ոսպնուկը (*Rhodopechys sanguineus*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Այս ապրելավայրում բնակվում են նաև մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), ոսկեգույն մեղվակերը (*Merops apiaster*) և գլոբալ վտանգված ներկարարը (*Coracias garrulus*) (VU): Արգելավայրի լեռնային տափաստաններն օգտագործվում են որպես առաջնահերթ որսավայր մի շարք սավառնող զիշատիչ թռչունների կողմից, ինչպիսիք են տարբեր անգղները, արծիվները, ճուռակները: Թփուտներով ծածկված խոր կիրճերում բնակվում են կարմրագլուխ շամփրուկը (*Lanius senator*) (VU) և տարբեր կենեխանմաններ և շահրիկներ, ներառյալ սպիտակափող սոխակը (*Irania gutturalis*) (DD), սիբիրյան չքչանը (*Saxicola maurus*), երգող շահրիկը (*Sylvia crassirostris*), ճուռականման շահրիկը (*S. nisoria*) և անապատային մորեհավը (*Hippolais languida*): Ցածրադիր վայրերում ցածր բուսականությամբ տափաստաններում հանդիպում են շիկապոչ սոխակը (*Cercotrichas galactotes*) և կարճամատ ճնճղուկը (*Carpospiza brachydactyla*): Ավելի մեծ բարձրությունների վրա տափաստան-մարգագետինների բնորոշ թռչուններից են լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*), եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*), լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*) և դաշտային արտույտը (*Alauda arvensis*):

Արգելավայրում շատ են ժայռոտ ապրելավայրերը՝ ներկայացված բազմազան քարափներով, ժայռային թափվածքներով, փլվածքային լանջերով և ժայռոտ ձորերով: Դրանք գտնվում են տարբեր բարձրությունների վրա և ստեղծում են նպաստավոր

պայմաններ բազմաթիվ թռչնատեսակների բնադրման համար: Ուրմնախորշերում և ժայռային խորություններում բնադրում են խոշոր գիշատիչ թռչուններ՝ մորուքավոր անգղը (*Gypaetus barbatus*) (VU), սպիտակագլուխ անգղը (*Gyps fulvus*) (VU) և գիշանգղը (*Neophron percnopterus*) (EN), քարարծիվը (*Aquila chrysaetos*) (VU), սապսանը (*Falco peregrinus*) (VU) և բվեճը (*Bubo bubo*) (VU): Ավելի փոքր ճեղքվածքներում բնակվում են արգելավայրում լայնորեն տարածված այնպիսի տեսակներ, որոնցից են սովորական հողմավար բազեն (*Falco tinnunculus*) և տափաստանային հողմավար բազեն (*F. naumanni*) (VU), կարմրակտուց ճայր (*Pyrhacorax pyrrhacorax*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*) և կապույտ քարակեռնեխը (*M. solitarius*), ժայռային ճնճղուկը (*Petronia petronia*) և սպիտակափոր մանգաղաթևը (*Apus melba*): «Գնիշիկ»-ի ժայռային ապրիելավայրերում սովորական են մեծ ժայռային սիտեղը (*Sitta tephronota*) (VU) և փոքր ժայռային սիտեղը (*S. neumayer*): Ցածրից մինչև միջին բարձրություններում ժայռային թափվածքներում բնակվում են քարակաքավը (*Alectoris chukar*) և վարդագույն սարյակը (*Sturnus roseus*), իսկ Հարսնաքար սարի ավելի մեծ բարձրությունների վրա հանդիպում են հազվագյուտ վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), ձյան ճնճղուկը (*Montifringilla nivalis*), ալպիական ճայր (*Pyrhacorax graculus*) (EN) և կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*) (DD):

Գիհու նոսրանտառները տարածքի մեկ այլ կարևոր ապրելավայրերից են և զբաղեցնում են դրա տարածքի զգալի մասը: Այս ապրելավայրի բնորոշ բնադրող թռչուններից են օձակեր արծիվը (*Circaetus gallicus*) (VU), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), սովորական այծկիթը (*Caprimulgus europaeus*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), կարմրաձակատ սերինոսը (*Serinus pusillus*) և լեռնային դրախտապանը (*Emberiza cia*):

Գարնանային և աշնանային միգրացիայի ժամանակ «Գնիշիկ» արգելավայրով անցնում են մի շարք չվող թռչուններ: Ամենաբազմաքանակ չվող թռչուններից են տարբեր ճնճղուկագլիները, որոնցից են խաղտոնիկները, ծիծեռնակները, արտույտները, շահրիկները, ճանճորսերը, ինչպես նաև գիշատիչ թռչունները՝ մեծ ճուռակը (*Buteo buteo*) և կրետակերը (*Pernis apivorus*), մարգագետնային մկնաճուռակը (*Circus pygargus*) (VU), տափաստանային հողմավար բազեն (*Falco naumanni*) (VU), տափաստանային արծիվը (*Aquila nipalensis*) (VU) և փոքր ենթաարծիվը (*A. pomarina*) (VU): Միգրացիա կատարող թռչունների շարքում կան գլոբալ վտանգված տեսակներ, որոնցից են կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD), տափաստանային մկնաճուռակը (*Circus macrourus*) (EN), բալոբանը (*Falco cherrug*) (EN), գերեզմանաարծիվը (*Aquila heliaca*) (VU) և երբեմն մեծ ենթաարծիվը (*A. clanga*) (VU):

Արգելավայրի տարածքը կարևոր վայր է քարակաքավի (*Alectoris chukar*) և կարմրաթև ոսպնուկի (*Rhodopechys sanguineus*), ինչպես նաև հազվագյուտ մորուքավոր անգղի (*Gypaetus barbatus*) (VU), գիշանգղի (*Neophron percnopterus*) (EN), քարարծիվի (*Aquila chrysaetos*) (VU) և օձակեր արծիվի (*Circaetus gallicus*) (VU), սապսանի (*Falco peregrinus*) (VU), բվեճի (*Bubo bubo*) (VU), ներկարարի (*Coracias garrulus*) (VU), մեծ ժայռային սիտեղի (*Sitta tephronota*) (VU), կարմրագլուխ շամփրուկի (*Lanius senator*) (VU) և վարդագույն սարյակի (*Sturnus roseus*) Հայաստանում բնադրող պոպուլյացիաների համար:

Պահպանվող լանդշաֆտի տարածքում հայտնի տեսակներից 80-ը (ֆաունայի 22.3%-ը) գրանցված են 2010 թ. ՀՀ Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 4 տեսակ: Դրանք են՝ Խճաքարային խխունջ *Orculella ruderalis*, Սանդղաձև խխունջ *Turanena scalaris*, Արենիական գնայուկ *Pristonychus arenicus* և Կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica*:

Անհետացող (EN)՝ 19 տեսակ: Դրանք են՝ Կեղծ խոտային չրիկան *Cardiophorus pseudogramineus*, Հայկական սևամարմին *Armenohelops armeniacus*, Գորբունովի երկարաբեղիկ *Dorcadion gorbunovi*, Երևանյան կապտաթիթեռ *Agrodiaetus eriwanensis*, Հուբերտի կապտաթիթեռ *Agrodiaetus huberti*, Իֆիգենիա կապտաթիթեռ *Agrodiaetus iphigenia araratensis*, Սուրակովի կապտաթիթեռ *Agrodiaetus surakovi*, Կաչուկի իլիկաթիթեռ *Hyles hippophaes caucasica*, Գիշանգ *Neophron percnopterus*, Սև անգղ *Aegypius monachus*, Տափաստանային մկնաճուռակ *Circus macrourus*, Բալոբան *Falco cherrug*, Սոխրագույն կոունկ *Grus grus*, Ալպիական ճայ *Pyrrhocorax graculus*, Լայնականջ ոզնի *Hemiechinus auritus*, Շելկովնիկովի կուտորա *Neomys teres*, Արաքսյան գիշերաչղջիկ *Myotis schaubi araxenus*, Զրասամույր *Lutra lutra* և Հայկական մուֆլոն *Ovis orientalis gmelinii*:

Խոցելի (VU)՝ 53 տեսակ: Դրանք են՝ Մնեմոզինա կամ սև ապոլոն *Parnassius mnemosyne rjabovi*, Ապոլոն *Parnassius apollo kashtshenkoi*, Ալեքսանդր առագաստաթիթեռ *Papilio alexanor orientalis*, Ավրորինա դեղնաթիթեռ *Colias aurorina*, Կանաչավուն դեղնաթիթեռ *Colias chlorocoma*, Ալկոն կապտաթիթեռ *Maculineaalcon monticola*, Արիոն կապտաթիթեռ *Maculinea arion zara*, Նինայի կապտաթիթեռ *Agrodiaetus ninae*, Թուրքական կապտաթիթեռ *Agrodiaetus turcicus*, Պրոզերպինա իլիկաթիթեռ *Proserpinus proserpina*, Սգաթև մեղու *Lithurge fuscipenne*, Սիմպեկմա ճպուռ *Sympecma paedisca*, Սիրիական սխտորագորտ *Pelobates syriacus*, Երկարաոտ սցինկ *Eumeces schneideri*, Առաջավորասիական մաբույա *Trachylepis septemtaeniata*, Անդրկովկասյան սահնօձ *Zamenis hohenackeri*, Հայկական լեռնատափաստանային իծ *Pelias eriwanensis*, Հայկական իծ կամ Ռադդեի իծ *Montivipera raddei*, Կարմիր բադ *Tadorna ferruginea*, Վայրի հնդկահավ *Tetraogallus caspius*, Գառնանգ *Gypaetus barbatus*, Սպիտակագլուխ անգղ *Gyps fulvus*, Օձակեր արծիվ *Circus gallicus*, Մարգագետնային մկնաճուռակ *Circus pygargus*, Եվրոպական ճնճղաճուռակ *Accipiter brevipes*, Ցախաքլորաոր *Accipiter gentilis*, Փոքր ենթաարծիվ *Aquila pomarina*, Մեծ ենթաարծիվ *Aquila clanga*, Տափաստանային արծիվ *Aquila nipalensis*, Բլրային արծիվ *Aquila heliaca*, Քարարծիվ *Aquila chrysaetus*, Գաճաճ արծիվ *Hieraetus pennatus*, Տափաստանային հողմավար բազե *Falco naumanni*, Սապսան *Falco peregrinus*, Սոխրագույն կոունկ *Grus virgo*, Հայկական որոր *Larus armenicus*, Սևափոր դրոն *Pterocles orientalis*, Բվեճ *Bubo bubo*, Կանաչ մեղվակեր *Merops persicus*, Ներկարար *Coracias garrulus*, *Motacilla citreola*, *Lanius senator*, Ժայռային մեծ սիտեղ *Sitta tephronota*, Իսպանական ճնճղուկ *Passer hispaniolensis*, Հնդկական մացառախող *Hystrix indica*, Հարավային պայտաքիթ չղջիկ *Rhinolophus euryale*, Մեհելիի պայտաքիթ չղջիկ *Rhinolophus mehelyi*, Սովորական երկարաթև չղջիկ *Miniopterus schreibersi*, Ասիական լայնականջ չղջիկ *Barbastella leucomelas*, Անտառակատու *Felis silvestris silvestris*, Խայտաքիս *Vormela peregusna*, Գորշ արջ *Ursus arctos* և Բեզուարյան այծ *Capra aegagrus*:

Տվյալների անբավարարություն (DD)՝ 4 տեսակ: Դրանք են՝ Քուռի քառթակ *Gobio persus*, Սպիտակափող սոխակ *Irania gutturalis*, Կարմրաթև մագլցող *Tichodroma muraria* և Կիսասպիտակավիզ ճանճորս *Ficedula semitorquata*:

Հարկ է նշել, որ ՀՀ Կարմիր գրքում գրանցված 80 տեսակներից 23-ը անողնաշարներ են, որոնց գերակշիռ մասը (21 տեսակ) միջատներն են:

Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում գրանցված են հետևյալ տեսակները՝

Անհետացող (EN)՝ 2 տեսակ: Դրանք են՝ Գիշանգղ *Neophron percnopterus* և Կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica*:

Խոցելի (VU)՝ 9 տեսակ: Դրանք են՝ Ապոլոն *Parnassius apollo kashtshenkoi*, Հայկական լեռնատափաստանային իծ *Pelias eriwanensis*, Մեծ ենթաարծիվ *Aquila clanga*, Բլրային արծիվ *Aquila heliaca*, Բալոբան *Falco cherrug*, Մեհելիի պայտաքիթ չղջիկ *Rhinolophus mehelyi*, Խայտաքիս *Vormela peregusna*, Բեզուարյան այծ *Capra aegagrus* և Հայկական մուֆլոն *Ovis orientalis gmelinii*:

Տվյալների անբավարարություն (DD)՝ 4 տեսակ: Դրանք են՝ Կաչուկի իլիկաթիթեռ *Hyles hippophaes caucasica*, Պրոզերպինա իլիկաթիթեռ *Proserpinus proserpina*, Առաջավորասիական մաքույա *Trachylepis septemtaeniata* և Արաքսյան գիշերաչղջիկ *Myotis schaubi araxenus*:

Գրեթե վտանգված (NT)՝ 10 տեսակ: Դրանք են՝ Արիոն կապտաթիթեռ *Maculinea arion zara*, Հայկական իծ կամ Ռադդեի իծ *Montivipera raddei*, Սև անգղ *Aegypius monachus*, Տափաստանային մկնաճուռակ *Circus macrourus*, Ներկարար *Coracias garrulus*, Կիսասպիտակավիզ ճանճորս *Ficedula semitorquata*, Փոքրասիական համստեր *Mesocricetus brandti*, Հարավային պայտաքիթ չղջիկ *Rhinolophus euryale*, Սովորական երկարաթև չղջիկ *Miniopterus schreibersi* և Զրասամույր *Lutra lutra*:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարածքում հանդիպում են 10 տեսակի էնդեմներ, որոնք տարբերակվում են հետևյալ խմբերի.

1. Հայաստանի էնդեմներ՝ 4 տեսակ: Դրանք են՝ Խճաքարային խխունջ *Orculella ruderalis*, Արենիական գնայուկ *Pristonychus arenicus*, Կեղծ խոտային չրիկան *Cardiophorus pseudogramineus* և Հայկական սևամարմին *Armenohelops armeniacus*:
2. Հարավային Անդրկովկասի էնդեմներ՝ 3 տեսակ: Դրանք են՝ Գորբունովի երկարաբեղիկ *Dorcadion gorbunovi*, Թուրքական կապտաթիթեռ *Agrodiaetus turcicus* և Ռադդեի ժայռային մողես *Darevskia raddei*:
3. Հայկական բարձրավանդակի էնդեմներ՝ 3 տեսակ: Դրանք են՝ Հայկական լեռնատափաստանային իծ *Pelias eriwanensis*, Հայկական իծ կամ Ռադդեի իծ *Montivipera raddei* և Հայկական մուֆլոն *Ovis orientalis gmelinii*:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կենդանական աշխարհի վերաբերյալ ամփոփված առկա տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ այս տարածքը հիմնարար ուսումնասիրության կարիք ունի: Առաջին հերթին դա վերաբերվում է անողնաշար կենդանիներին: Վերջիններիս մասին առկա տվյալները կրում են մասնակի բնույթ և հիմնականում վերաբերվում են միջատների առանձին խմբերի կամ ընտանիքների ուսումնասիրմանը: Տարբեր տվյալներով Հայաստանում նկարագրված են միջատների ավելի քան 20 կարգեր, իսկ ընտանիքների, առավել ևս տեսակների թիվը մինչ այսօր մնում է վիճելի և պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն: Մյուս կողմից, ուսումնասիրությունները սահմանափակվել են միայն վնասատու

տեսակների շրջանակներում:

Ողնաշարավոր կենդանիները նույնպես լուրջ ուսումնասիրությունների կարիք են զգում, քանի որ միայն չղջիկներ, որոշ թռչուններ և որոշ կաթնասուններն են (ընծառնուծ, հայկական մուֆլոն, բեզոարյան այծ) բավարար կերպով հետազոտված:

Ելնելով պահպանվող լանդշաֆտի կենդանական աշխարհի նախնական գույքագրման տվյալներից և տարածքի գիտական ու բնապահպանական նշանակությունից՝ անհրաժեշտ է հետևյալ ուսումնասիրությունների իրականացումը.

1. Անողնաշար կենդանիների հաշվառման և էկոլոգիական պայմաններին հարմարողականության հետազոտություններ,
2. Բնական և անթրոպոգեն պայմանների հետազոտում և գնահատում,
3. ՀՀ Կարմիր գրքում գրանցված և էնդեմիկ տեսակների հաշվառում, արեալների և հատկապես բազմացման և տեղաշարժման վայրերի քարտեզագրում և պահպանության միջոցառումների մշակում,
4. Միգրացիոն ուղիների որոշման, ճշգրտման, վիճակի ուսումնասիրությունների, քարտեզագրման ու պահպանության միջոցառումների մշակման աշխատանքներ,
5. Կենսաբազմազանության, ապրելավայրերի և մարդածին ազդեցության մոնիթորինգի համակարգի մշակում և ներդրում:

1.7. Սոցիալ-տնտեսական իրավիճակը

1.7.1. Ժողովրդագրություն

Ըստ Ագարակաձոր, Արենի, Գնիշիկ (ներառյալ Մոզրով գյուղը) և Խաչիկ համայնքների պաշտոնական ժողովրդագրական տվյալների որոնք հավաքվել են համայնքապետարաններից և ճշգրտվել են տարածքային վիճակագրական ծառայության միջոցով, այս համայնքների բնակչության վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Համայնքների բնակչության ժողովրդագրական բաշխվածքը (մարդ), 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ

Համայնքներ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ
Տնային տնտեսությունների քանակը	344	543	61	257
Առկա բնակչության քանակը (ներառյալ ժամանակավոր ներկա), այդ թվում	1,241	1,769	212	1,007
Արական	592	851	96	464
Իգական	649	918	116	543
Ժամանակավոր բնակչություն, այդ թվում	0	47	3	89
Արական	0	4	1	36
Իգական	0	43	2	53

Զբաղված բնակչություն (առանց ժամանակավոր ներկաների), այդ թվում	929	1,016	166	483
Գյուղատնտեսություն	761	795	154	375
Ոչ գյուղատնտեսական գործունեություն	168	221	12	108
Կազմակերպություններում աշխատող բնակչության քանակը	106	197	12	105

Բնակչության ընդհանուր թիվը հետազոտված համայնքներում կազմում է 4229 մարդ, 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ: Սեռային բաշխվածքը գրեթե հավասարաչափ է, արական բնակչությունը կազմում է 47.36%: Կանանց որոշ գերակշռող քանակը պայմանավորված է արական բնակչության երկարաժամկետ աշխատանքային միգրացիայի առկայությամբ: Իրավիճակը հատկապես վատ է Գնիշիկ համայնքում, որտեղ բնակչության քանակը շատ քիչ է: Մյուս համայնքներում բնակվողների թիվն ավելի բարձր է և բավարար է զարգացման ծրագրեր իրականացնելու համար:

Առկա բնակչության 61.34%-ը զբաղված է և զբաղվում է եկամուտ հետապնդող տնտեսական գործողություններով: Հաշվի առնելով անչափահասների և տարեցիների բավականին մեծ թիվը՝ սա բարձր ցուցանիշ է: Զբաղվածների զգալի մասը (49.3%) զբաղված է գյուղատնտեսության մեջ, հիմնականում՝ սեփական սպառմանը միտված: Մյուս կողմից, ընդհանուր բնակչության մոտ 10%-ը զբաղված է պետական բյուջեից ֆինանսավորվող ոչ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում, ինչպիսիք են համայնքապետարանները, դպրոցները, առողջապահական հիմնարկները: Մասնավոր ձեռնարկատիրությունները քիչ աշխատատեղեր են ապահովում, հիմնականում մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտներում:

Համայնքների բնակչության սեռատարիքային բաշխվածքը տարածքում զարգացման ծրագրերի իրականացման մեկ այլ որոշիչ գործոն է հանդիսանում, որը բնորոշում է առկա մարդկային ռեսուրսները: Աղյուսակ 6-ում բերված տվյալները ներյակացնում են ընթացիկ իրավիճակը:

16-62 տարեկան կանանց և 16-63 տարեկան առկա տղամարդկանց առկա բնակչությունը դիտարկվում է որպես զարգացման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրս: Վերը նշված չորս համայնքներում այս տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է մոտ 70%-ը, ինչը վկայում է նման ռեսուրսի առկայության մասին՝ չնայած այն, որ նկատվում է բնակչության ծերացման որոշակի միտումը:

Տարեց (62 և 63 տարեկանից բարձր) բնակչության մեծ մասը ևս զբաղված է, ինչը պայմանավորված է ծանր սոցիալական և տնտեսական պայմաններով:

Ինչպես Հայաստանի այլ մասերում, աշխատանքային միգրացիան, հիմնականում՝ դեպի Ռուսաստան, հանդիսանում է կարևոր երևույթ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքներում որը կրում է կայուն բնույթ (Աղյուսակ 4): Հեռացողների գերակշիռ մեծամասնությունը կազմում են աշխատունակ տարիքի արական բնակչությունը, որը կարևորագույն նշանակություն ունի համայնքային զարգացման համար:

Աղյուսակ 4. Աշխատանքային միգրացիան «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքներում, մարդ

Տարիներ ու համայնքներ	2008	2009	2010		Ընդամենը
			Թվաքանակ	% ընդհանուր	
Ագարակաձոր	60	70	75	6.04	205
Արենի	140	140	140	7.91	420
Գնիշիկ (Մոզրով)	22	13	9	4.25	44
Խաչիկ	30	30	20	1.99	80
Ընդամենը	2,260	2,262	244	5.77%	749

Բնակչությունը տարրական և միջնակարգ կրթությունը ստանում է իրենց համայնքներում, մինչդեռ մասնագիտական և բարձրագույն կրթությունը հասանելի է միայն մարզկենտրոն Եղեգնաձորում և մայրաքաղաք Երևանում: Բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվով առաջատարը Արենի համայնքն է (150 մարդ, մնացած համայնքներում՝ 20-ից 50):

Բացառությամբ Խաչիկ համայնքի, բոլոր այլ համայնքներում բնական աճի միտումները վերջին ժամանակահատվածում դրական են, ինչը դրական է, քանի որ վկայում է բնակչության (հատկապես՝ երիտասարդության) ապագայի նկատմամբ ունեցած պլանների մասին:

Նշված համայնքներում աշխատունակ բնակչության բաշխվածըը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքների մարդկային ռեսուրսները, 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ

	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ	Ընդամենը
Աշխատունակ տարիքի բնակչությունը (15-ից բարձր Ագարակաձորի և Արենիի համար, 18-ից բարձր Գնիշիկի և Խաչիկի համար)	1,069	1,472	168	797	3,506
Աշխատունակ բնակչությունը, այդ թվում	1,034	1,362	166	670	3,232
Զբաղված գյուղատնտեսության մեջ	761	795	154	375	2,085
Զբաղված ոչ գյուղատնտեսության մեջ	168	251	12	128	559
Զբաղված կազմակերպություններում	106	221	12	45	384

Աղյուսակ 6. Համայնքների ժողովրդագրական բաշխվածքը ըստ տարիքի ու սեռի (մարդ), 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ

Համայնքներ	Ագարակաձոր						Արենի						Գնիշիկ (Մոզրով)						Խաչիկ					
	0-7	8-15	16-62 63 և բարձր (արական)	16-61 62 և բարձր (իգական)			0-7	8-15	16-62 63 և բարձր (արական)	16-61 62 և բարձր (իգական)			0-7	8-15	16-62 63 և բարձր (արական)	16-61 62 և բարձր (իգական)			0-7	8-15	16-62 63 և բարձր (արական)	16-61 62 և բարձր (իգական)		
Տարիքային խմբեր																								
Առկա բնակչության քանակը (ներառյալ ժամանակավոր ներկա), այդ թվում	79	109	437	57	471	88	172	157	586	78	640	136	18	25	70	4	85	10	73	97	340	49	355	93
արական	49	49	437	57			95	92	586	78			11	11	70	4			36	39	340	49		
իգական	30	60			471	88	77	65			640	136	7	14			85	10	37	58			355	93
Ժամանակավոր բնակչություն, այդ թվում							2	1	2		41	1				1	1	1	6	3	32		48	
արական							1	1	2							1			3	1	32			
իգական							1				41	1					1	1	3	2			48	
Զբաղված բնակչություն (առանց ժամանակավոր ներկաների), այդ թվում		6	398	46	405	74			472	59	423	62			70	3	84	9			245	18	220	
Գյուղատնտեսություն		6	319	46	317	73			331	54	349	61			67	3	75	9			165	17	193	
Ոչ գյուղատնտեսական գործունեություն			79		88	1			141	5	74	1			3		9				80	1	27	
Կազմակերպություններում աշխատող բնակչության քանակը			54		51	1			121	4	71	1			3		9				79	1	25	

Համաձայն վերը նշված տվյալների, աշխատունակ բնակչության ընդամենը 18.2%-ը ներգրավված չէ տնտեսական գործունեության մեջ, ինչը վկայում է այս համայնքներում զգալի մարդկային ռեսուրսների առկայության մասին, որոնք կարող են ներգրավվել «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գործընթացներում:

Աշխատունակ բնակչության 65%-ը ներգրավված է գյուղատնտեսության մեջ, իսկ 11.9%-ը՝ պետական և մասնավոր կազմակերպություններում, բայց շարունակում են զբաղվել տնամերձ տարածքների մշակմամբ: Ընդամենը 38 բնակիչ են ինքնազբաղված ոչ գյուղատնտեսական ոլորտներում, ինչը շատ քիչ է 4 համայնքների համար: Այս պարագայում հստակ կենտրոնացում է նկատվում Արենի համայնքում, քանի որ այն գտնվում է Երևան-Մեղրի մայրուղու վրա և դրա հետևանքով ունի առևտրի և ծառայությունների զարգացման ներուժ:

1.7.2. Հողերի և բնական ռեսուրսների օգտագործումը

Հողագործություն

Աղյուսակ 8-ում ներկայացված են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի չորս համայնքներում հողագործության հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 8. Հողագործության մակերեսները (հա, 1) և բերքի ծավալները (կգ, 2), ըստ 2010 թ. տվյալների: - տվյալներ չկան

Մշակաբույսեր	Ագարակաձոր		Արենի		Գնիշիկ (Մոզրով)		Խաչիկ		Ընդամենը	
	1	2	1	2	1	2	1	2	1	2
Հացահատիկ	55	126,500	0	0	41.5	33,200	317	586,000	413.5	745,700
Հատիկընդեղեն	1	1,500	1.5	1,500	0.12	400	3	8,000	5.67	11,400
Կարտոֆիլ	3.5	80,000	5	100,000	1.2	17,000	1.5	15,000	11.2	212,000
Բանջարեղեն	18.4	280,000	46.9	740,000	0.61	8,000	4	65,000	69.9	1,093,000
Կերային կուլտ.	52.9	162,300	31	250,000	56.3	200,000	143	820,000	283.2	1,432,300
Հնդավորներ	10.4	20,500	0	0	0.57	3,500	31.0	59,000	41.97	83,000
Կորիզապտուղներ	30.2	8,000	66.5	42,500	7.76	7,500	5.0	2,200	109.5	60,200
Ընկույզ	2.5	4,500	2.0	1,000	4.44	2,000	20.0	4,200	28.94	11,700
Հատապտուղ	0.9	3,000	0	0	0.25	-	1	600	2.15	-
Խաղող	3.6	2,500	94.0	580,000	13.0	67,000	32.0	60,000	142.6	709,500

Հացահատիկի (հիմնականում՝ աշնանային ցորենի) մշակությունը կատարվում է սեփական սպառման նպատակով: Արենի համայնքի բնակչությունը գրեթե չի մշակում հացահատիկը, նախընտրելով ավելի բարձրարժեք բանջարեղենը: Բանջարեղենի մշակությունը գերադասում է բոլոր չորս համայնքներում: Կերային կուլտուրաները համարյա չեն մշակվում, այլ հավաքվում են խոտհարքերից:

Վայոց Ձոր մարզի, հատկապես՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքների հողատարածքների բնակլիմայական պայմանները բարենպաստ են մրգեր, ընկույզ և խաղող մշակելու համար: Հնդավորները հիմնականում ներկայացված են խնձորով ու տանձով, որոնք փոքր քանակությամբ մշակվում են սեփական սպառման և առևտրի համար: Կորիզապտուղներից մեծ

պահանջարկ ու բարձր արժեք ունեն ծիրանը և դեղձը, որոնց զգալի մասը իրացվում է մեծածախ գնորդներին և արտահանողներին:

Ընկույզը մշակվում է հիմնականում Խաչիկում և մեծ ծավալներով սպառվում է Ամանոթի տոների շեմին և մայրուղու վրա գտնվող առևտրի կետերում: Խաղողը հիմնականում մշակվում է Արենի համայնքի հողատարածքներում՝ գինեգործության նպատակով:

Անասնապահությունը մեծագույն դեր ունի «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքներում իրականացվող գյուղատնտեսական գործունեության մեջ (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Անասնազիլաքանակը (2011 թ. հունվարի 1) և արտադրանքը (2010 թ.)

Կենդանիներ	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզրով)	Խաչիկ
Խոշոր եղջերավոր անասուն				
Գլխաքանակ	263	343	139	275
Կովի կաթ, լիտր	327,500	240,000	97,500	200,000
Տավարի միս, կգ	12,000	9,940	5,000	15,000
Խոզեր				
Գլխաքանակ	19	57		84
Ոչխարներ և այծեր				
Ոչխար, գլխաքանակ	83		97	156
Ոչխարի կաթ, լիտր	20,750			
Ոչխարի միս, կգ	400		10,000	1,200
Այծ, գլխաքանակ	40		195	46
Այծի կաթ, լիտր	14,000		19,440	5,000
Այծի միս, կգ	100		5,000	400
Բուրդ, կգ			145	
Ձիեր և ավանակներ				
Ձի, գլխաքանակ	2	6	14	3
Ավանակ, գլխաքանակ	6	8		19
Ճագարներ				
Գլխաքանակ		70		
Մեղվաբուծություն				
Մեղվաբնտանիք, քանակ	301	555	252	362
Մեղր, կգ	3,000	8,000		3,700
Մեղրային այլ				200
Թռչուններ				
Գլխաքանակ	1,385	3090	324	1,542
Հավի միս, կգ	50	2,000		800
Ձու, հատ	80,000	500,000	33,900	150,000

Խոշոր եղջերավոր անասունները առկա են բոլոր համայնքներում, ամենաշատը՝ Արենիում, բայց ոչ բոլոր տնային տնտեսությունները ունեն դրանց: Գլխաքանակի կեսից ավելին պահվում է կաթի արտադրության համար, մնացած մասը մսատու է ու պահվում է հիմնականում առևտրային նպատակներով: Ոչխարների և խոզերի գլխաքանակը շատ չէ, այն պահվում է առևտրի նպատակներով:

Հայաստանում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերից լավագույներից մեկն է Վայոց Ձորում (այդ թվում՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքներում) ժամանակակից բարձր արտադրողական այծերի ներկրումը ու բուծումը: Մեծ ներուժ ունի մեղվաբուծությունը:


Կաթի արտադրողականությունը մեծ չի (ընդհանուրը մոտ 1,000 տոննա), բայց այն բարձր պահանջարկ ունի: Բացի իրացման շուկայից հեռու գտնվող Խաչիկից, մնացած համայնքները իրացնում են արտադրված կաթի մոտ 70%-ը: Սովորաբար կաթը վերամշակվում է կաթնամթերքի կամ պանրի և իրացվում է քաղաքներում:

Մսի արտադրությունը բարձր է հատկապես Ագարակաձորում և Խաչիկում՝ մինչև 80%-ը: Մեղրը ունի բարձր պահանջարկ, չնայած այն շատ թանկ է:

Հողերը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հողօգտագործման սխեման ներկայացված է Քարտեզ 3-ում:

Քարտեզ 3. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հողօգտագործման սխեման



Աղյուսակ 10-ում ներկայացված են պաշտոնական տվյալներ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համայնքներում հողերի բաշխվածքը ըստ դրանց նպատակների և գրանցման:

Աղյուսակ 10. Համայնքային հողերի բաշխվածքը ըստ օգտագործման նպատակների, հա (2011 թ. սկզբի դրությամբ)

Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ագարակաձոր	Արենի	Գնիշիկ (Մոզորով)	Խաչիկ
1. Գյուղատնտեսական հողեր	Վարելահող	785.78	166.65	257.67	1,214.57
	Բազմամյա տնկարկներ, այդ թվում	24.90	131.42	35.0	38.11
	Պտղատու այգի	24.90	17.53	20.0	6.00
	Խաղողի այգի		113.89	15.0	32.11
	Խոտհարք	37.00	28.70	85.75	44.04
	Արոտ	950.25	1,168.20	5,524.93	1,388.84
	Այլ հողատեսքեր	3,761.29	2,408.45	613.52	4,323.83
	Ընդամենը	5,559.22	3,903.42	6,516.87	7,009.39
2. Բնակավայրերի հողեր	Բնակելի կառուցապատման, այդ թվում	61.49	100.57	14.27	66.35
	Տնամերձ հողեր	61.49	100.57	14.27	66.35
	Այգեգործական հողեր				
	Հասարակական	1.74	2.08	0.27	3.18

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման պլան (2014-2018)

	կառուցապատման				
	Խառը կառուցապատման				
	Ընդհանուր օգտագործման	12.49	16.98	2.45	8.03
	Այլ հողեր	6.99	29.90	6.27	14.29
	Ընդամենը	82.71	149.53	23.26	91.85
3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	Արդյունաբերության		0.01		0.84
	Գյուղատնտեսական, արտադրական	6.22	12.30	0.9	0.70
	Պահեստարանների		0.09		0.05
	Ընդերք օգտագործման	11.81	35.14		
	Ընդամենը	18.03	47.54	0.9	1.59
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	Էներգետիկայի	0.03	0.04	0.00	0.02
	Կապի		0.01		
	Տրանսպորտի	0.80	15.03	14.03	7.00
	Կոմունալ ենթակառ.	0.08			0.02
	Ընդամենը	0.91	15.08	14.03	7.04
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	Բնապահպանական, այդ թվում		154.40		
	Արգելոցներ		154.40		
	Առողջարարական				
	Հանգստի				
	Պատմամշակութային	59.07	18.92	1.31	34.52
	Ընդամենը	59.07	173.32	1.31	34.52
6. Հատուկ նշանակության հողեր	Ընդամենը		0.24		1.25
7. Անտառային հողեր	Անտառ	25.00			156.90
	Թփուտ				
	Վարելահող				
	Խոտհարք				
	Արոտ				
	Այլ հողեր				
	Ընդամենը	25.00			156.90
8. Զբային տարածքներ	Գետեր	14.65	37.98	3.56	
	Ջրամբարներ				0.39
	Լճեր	0.49			
	Ջրանցքներ	1.95	2.94		
	Հիդրոտեխ. և ջրտնտես. այլ օբյեկտներ		6.20		0.64
	Ընդամենը	17.09	47.12	3.56	1.03
9. Պահուստային հողեր	Աղուտներ				
	Ավազուտներ				
	Ճահիճներ				
	Այլ անօգտագործելի հողեր				
	Ընդամենը				
Ընդամենը		5,762.03	4,336.25	6,559.93	7,303.57

Համայնքների հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 24,000 հա, որից առաջատարը Խաչիկն է: Աղյուսակ 10-ում նշված 9 հողատեսքերից հատկապես կարևորվում են

գյուղատնտեսական նշանակության հողերը: Նշված համայնքներում բոլոր գյուղատնտեսական հողերը պատկանում են կամ համայնքներին, կամ էլ՝ հայաստանյան ռեզիդենտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Վարելահողերի մակերեսով առաջատարը Խաճիկ համայնքն է, բայց այս հողերը սահմանակից են Ադրբեջանին և չեն կարող անվտանգ մշակվել: Համայնքային հողերի զգալի մասը սեփականաշնորհվել է ՀՀ ռեզիդենտների կողմից. Ագարակաձորում՝ 60.5%, Արենիում՝ 87.3%, Գնիշիկում՝ 53.2% և Խաչիկում՝ 47.6%-ը: Վարձակալված հողերի մասնաբաժինը նույնպես զգալի է. Գնիշիկում՝ 46.8%, Խաչիկում՝ 11.9% և Արենիում՝ 5.8%: Անմշակ վարելադերը շատ են Ագարակաձորում (39.5%) և Խաչիկում (40.5%): Սեփականացված կամ վարձակալված հողերի մեծ մասը չի մշակվում:

Բազմամյա տնկարկների մեծ մասը կենտրոնացված է Արենիում, որից 87%-ը կազմում են խաղողի այգիները: Գնիշիկում դրանք քիչ են կլիմայական պայմաններից ելնելով: Գրեթե բոլոր բազմամյա տնկարկները սեփականաշնորհված են:

Արոտները և խոտհարթերը բնակչության կողմից օգտագործվում են կերարտադրության և ընտանի կենդանիների արածեցման նպատակներով: Դրանց սեփականաշնորհման և վարձակալման ծավալները չնչին են, բայց համայնքների բնակչության կողմից իրականացվող ինտենսիվ արածեցումը նպաստում է գերարածեցմանը և բնակելիության պայմանների վատթարացմանը:

Բնակավայրերի հողերից մեծ մասը գտնվում է Արենիում: Դրանց հիմնական մասը ներկայացված է տնամերձ հողերով, որոնք մշակվում են ինքնաապահովման նպատակով:

Արդյունաբերական և ընդերքօգտագործման հողերին պատկանող տարածքները գրանցված են Ագարակաձոր և Արենի գյուղերում՝ յուրաքանչյուրում 3-ական քարերի հանքավայրերի շահագործման նպատակով: Ընդհանուր առմամբ, հանքարդյունաբերական տարածքները կազմում են մոտ 50 հա, բայց բուն քարհանքերի մակերեսն ավելի փոքր է:

Թիրախված համայնքների տարածքում առկա են նաև պահպանվող տարածքներ, որոնք պատկանում են «Արփի» բնապատմական արգելոցին: Դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 268 հա, հիմնականում՝ Արենիում: Այս տարածքների առկայությունը լուրջ գրավական է համայնքներում բնապահպանական իրավիճակի բարելավման, պատմամշակութային և բնական հուշարձանների պահպանման համար: Այս երևույթը մեծապես կարևորվում է նաև տնտեսական, հատկապես՝ զբոսաշրջության զարգացման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ II. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Հիմնական առանձնահատկությունները

Այս բաժինը ներկայացնում է պահպանվող լանդշաֆտի բնական, սոցիալ-տնտեսական և մշակութային հիմնական առանձնահատկությունները:

ԲՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիհու նոսրանտառ, որը գտնվում է Մոզրով և Ամադու բնակավայրերի վերին հատվածում

Զաֆարի տարածքում և Նորավանքի կիրճում ցածրադիր գոտու ողողվող սաղարթավոր անտառ

Սաղարթավոր մնացուկային անտառ Մոզրովի տարածքում

Արոտավայրեր և խոտհարքեր Գնիշիկի, Բոլորաբերդի և Գանձակի տարածքներում

Triticum boeoticum, *T. araraticum* տեսակներով հարուստ չոր մարգագետին

Արփա գետ

Արփա գետի երկայնքում հանդիպող մշակովի հողամաս

Տեռասային խաղողի այգիներ Նորավանքում և Զաֆարի տեղամասում

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Գլոբալ նշանակություն. մի քանի վտանգված տեսակների առանցքային կարևորության արեալ: Սոցիալ-տնտեսական նշանակություն. վառելափայտ:

Ազգային նշանակություն. գորշ արջի *Ursus arctos* արեալի մաս Սոցիալ-տնտեսական նշանակություն. վառելափայտ:

Ազգային նշանակություն՝ գորշ արջի *Ursus arctos* արեալի մաս Սոցիալ-տնտեսական նշանակություն. վառելափայտ և դեղաբույսեր:

Տեղական նշանակություն. անասունների արածեցման համար բարձր սոցիալ-տնտեսական արժեք:

Գլոբալ նշանակություն. բնապահպանական նշանակության հողատարածք: Բարձր սոցիալ-տնտեսական արժեք. մշակաբույսերի վայրի ազգակիցների արեալ:

Տարածաշրջանային նշանակություն. ռոտգման և ձկնաբուծության առումով բարձր սոցիալ-տնտեսական արժեք ներկայացնող օբյեկտ: Մշակովի ողողվող գոտու տեսարժան վայր՝ էսթետիկական արժեք:

Տարածաշրջանային նշանակություն. բարձր սոցիալ-տնտեսական արժեք մրգերի և բանջարաբուստանային մշակաբույսերի համար:

Բարձր սոցիալ-տնտեսական պոտենցիալ բարձրորակ խաղողի տեսակների մշակման համար: Փոփոխված լանդշաֆտի վառ օրինակներ:

Հացահատիկային և խոտային տեռասային հողատարածքներ Բոլորաբերդի տարածքում

Հաճարի և ցորենի վայրի ազգակիցների տեղական այլ տեսակների մշակովի հողատարածքներ

Ծիրանի և դեղձի վաղեմի մրգատու այգիներ

Վաղեմի խաղողի այգիներ

Կարստային քարանձավների համակարգ (Մագիլի, Արջերի, Մոզրովի, Ջրովանք)

Հայկական մուֆլոն

Բեզոարյան այծ

Ջրասամույր

Կովկասյան ընձառյուծ

Գորշ արջ

Հարավային պայտաքիթ չղջիկ

Մեհելիի պայտաքիթ չղջիկ

Տափաստանային հողմավար բազե

Գառնանգղ

Գիշանգղ

Սպիտակագլուխ անգղ

Վայրի հնդկահավ

Ոռոգման ջրի սակավության պայմաններում բարձր սոցիալ-տնտեսական արժեք ավանդական և էնդեմիկ բույսերը մշակելու համար:
Փոփոխված լանդշաֆտի վառ օրինակներ:

Գլոբալ նշանակություն
ագրոկենսաբազմազանության առումով:
Սպիտակուցի և ամինաթթուների ավելի բարձր պարունակություն` ի համեմատ *Triticum aestivum*-ի:

Ազգային նշանակություն
ագրոկենսաբազմազանության համար: Բարձր սոցիալ-տնտեսական արժեք բարձրորակ ապրանքների համար:

Ազգային/ նշանակություն
ագրոկենսաբազմազանության համար: Բարձր սոցիալ-տնտեսական արժեք բարձրորակ ապրանքների համար:

Գլոբալ նշանակություն. բույսեր փոշոտող պահպանվող չղջիկների ապրելավայրեր:
Բարձր սոցիալ-տնտեսական պոտենցիալ արժեք տուրգիմի զարգացման համար:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Գլոբալ նշանակություն. անհետացող տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Գլոբալ նշանակություն. կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Ազգային նշանակություն. գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Ազգային նշանակություն. վտանգված տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Գլոբալ նշանակություն. անհետացող տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Ազգային նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Ազգային նշանակություն. խոցելի տեսակ,

Ներկարար

Բուսատեսակներ

գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Գլոբալ նշանակություն. խոցելի տեսակ, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում Ազգային նշանակություն. 55 հազվադեպ և վտանգված տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում և 46 էնդեմիկ տեսակ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորավանքի վանական համալիր

Գնիշիկի եկեղեցի

Գլխատներ Գնիշիկում (4 օրինակ),
Արենիում (6 օրինակ) և
Ագարակաձորում (2 օրինակ)

Գնիշիկի գերեզմանատուն

Գանձակի եկեղեցի

Էրտիչ Բերդ Արփի գյուղի մոտ

Ջրովանք

Ագարակաձորի քարե կամուրջ

Արենիի եկեղեցի

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Գլոբալ նշանակություն. հայկական հոգևոր ճարտարապետության եզակի օրինակ (IX-XVII դդ.): Շրջանի ամենահայտնի և ամենաշատ այցելուներ հյուրընկալող համալիր: ՀՀ մշակույթի նախարարության կողմից ընդգրկվել է Բարձր պատմական և մշակութային արժեք ունեցող ժառանգությունների ցանկը: Համալիրին ավելի մեծ արժեք է հաղորդում լանդշաֆտը, որում այն տեղակայված է:

Տեղական նշանակություն: Հատուկ շինարարական մեթոդ *presbiterium*-ի (քար) և առաստաղի համար (փայտանյութեր և օջախ, XVII դ.)

Գլոբալ նշանակություն. գլխատների նշանավոր և հազվագյուտ նմուշներ՝ կտուրի կառուցման հատուկ մեթոդով: Այս մեթոդը կիրառվում էր մինչև XIX դ. Հյուսիսային Կովկասից մինչև Իրաք, արևելյան Անատոլիա և Հնդկաստան:

Ազգային նշանակություն. հնագույն հեթանոսական գերեզմանաքարեր և խաչքարեր

Տեղական նշանակություն. տեղական ճարտարապետության նմուշներ:

Տեղական նշանակություն. բերդի միջնադարյան մնացորդները որոնք տեղակայված են Ջրովանք կիրճի Բարձր ժայռի վրա:

Տեղական նշանակություն. փոքր եկեղեցի շայռերի մեջ, մուտք դեպի կարստային քարանձավ որը տանում է Էրտիչ

Ազգային նշանակություն. «Մետաքսե ճանապարհ»-ի մնացորդներ: Արփա գետը հանդիսանում էր հայտնի և հեշտ ճանապարհ առևտրականների համար:

Ազգային նշանակություն. Հայաստանի XIV դ.

Ռասկապերտ, գտնվում է
Նորավանքի կիրճին զուգահեռ
արևմտյան կողմի վրա

ամենահայտնի ճարտարապետներից մեկի՝ Մոմիկի
գլուխգործոց:

Համապետական նշանակություն. մոնղոլների և
թաթարների ճակատամարտի վայր: Այստեղ
հայտնաբերված նմուշներից շատերը բերվել են
Սարդարապատի թանգարան:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գինու գործարաններ Արենի, Արփի,
Ագարակաձոր համայնքներում

Եղեգնաձորի պահածոների
գործարան

Գնիշիկի և Արփիի քարի հանքեր

Արհեստ. բամբակյա կարպետների
արտադրություն Արփի և Գնիշիկ
համայնքներում

Գնիշիկի և Ամաղուի
մեղվապահներ (բարձրադիր
լեռների մարգագետիններ)

Հորած պանրի արտադրողներ
Գնիշիկում

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բարձր սոցիալ-տնտեսական նշանակություն
ազգային և միջազգային շուկաների համար

Կարևոր է տեղական համայնքների զարգացման
համար

Տեղական սոցիալ-տնտեսական նշանակություն
շինարարական սեկտորի համար
Պոտենցիալ սոցիալ-տնտեսական նշանակություն
էկոտուրիզմի զարգացման և տեղական
բնակչության կողմից այլընտրանքային
եկամուտների ստացման համար

Բարձրորակ մեղր

Վայոց ձորին բնորոշ պանրի ավանդական
արտադրություն

2.2 Կարևորության գնահատում

Գլոբալ կարևորություն: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը համաշխարհային
նշանակություն ունի համաշխարհային մակարդակով վտանգված կենդանատեսակների և
բուսատեսակների պահպանության առումով. դրանց ներկայությունը պայմանավորված է երկու
տարբեր կլիմայական գոտիների միջև տեղակայված պահպանվող լանդշաֆտի սահմանային
դիրքով: Գոտիներից մեկը բնորոշվում է որպես խոնավ հյուսիս-կովկասյան գոտի, իսկ մյուսը՝
չոր կիսաանապատային իրանական: Այս երկու կլիմայական գոտիների հարևանությունը
ստեղծել է տարբեր կլիմաների պատկանող տեսակների համաբնակեցման պայմաններ՝
այսպիսով խթանելով հատկանշական հարուստ գենետիկ ցեղերի զարգացումը: Տարածքի
կենսաբանական բազմազանությունը արտացոլում է իր դիրքը երկու հիմնական բուսական
շրջանների միջև, այն է՝ միջերկրական և բորեալ ֆլորաներ: Պայմանավորված
կենսաաշխարհագրական դիրքով, լանդշաֆտի բազմազանությամբ, բարձրության

փոփոխություններով և լեռնային բնությով՝ տարածքում տեղ է գտնում կենդանատեսակների մեծ շարք: Նման բազմազանությունը արտառոց է՝ կովկասյան տարածաշրջանի այլ վայրերի հետ համեմատ: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը գլոբալ նշանակություն ունի տարածքում առկա մեծ թվով մշակութային հուշարձանների պահպանության և վերակառուցման համար:

Ազգային կարևորություն: Ավելին, Գնիշիկ պահպանվող լանդշաֆտի հաստատումն ունի ռազմավարական նշանակություն ազգային բնապահպանական ծրագրերի առումով: Շնորհիվ իր դիրքի, այն ունի մեծ հնարավորություն դառնալ տրանզիտային՝ վայրի կենդանատեսակների շարժը հյուսիսում գտնվող «Խոսրովի անտառ» արգելոցից դեպի Սյունիքի հարավային մասերը («Շիկահող» արգելոց, «Զանգեզուր» արգելավայր և «Արևիկ» ազգային պարկ) խթանելու համար:

Տարածաշրջանային կարևորություն: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կազմավորման հիմնական խնդիրներից է Վայոց ձոր մարզի հյուսիսային մասում կենսաբանական միջանցքի ստեղծումը: ԲՊՄՄ 5-րդ կատեգորիայի պահպանվող լանդշաֆտը՝ որպես «միջանկյալ օղակ» պահպանության մեծածավալ, ենթատարածաշրջանային սխեմայի շրջանակներում, օժանդակելու է կենսաբանական միջանցքի ստեղծմանը և նպաստել ավելի մեծ կապվածությանը լայնարձակ տարածքի կտրվածքով:

Տեղական կարևորություն: Ավելին, 5-րդ կատեգորիայի հատկանշական կողմն այն է, որ ղեկավարությունը անդրադառնում է մարդկանց և բնության միջև կապին և մարդիկ դիտվում են որպես լանդշաֆտի կառավարիչներ: Մարդիկ լանդշաֆտի արժեքների ճարտարապետներն են, և նրանց օժանդակությունը անհրաժեշտ է դրա գոյատևումը ապահովելու համար: Երևակայական առումներով դրանք օգնում են ստեղծել և հոգալ շրջակա միջավայրի մասին ավանդույթների զուգորդությամբ, սակայն՝ ապագայի հեռանկարներով: Այս իմաստով մարդիկ կարող են ավելի ճշգրտորեն նկարագրվել՝ որպես պահպանվող տարածքի «կառավարիչներ»: Բացի այդ, կառավարումը պետք է հիմնվի փոխգործակցող մոտեցումների վրա, ինչպես օրինակ՝ համադրելավարումը և բազմաշահառու անաչառությունը: Տեղի բնակչության ամբողջական ներգրավումը պահպանվող լանդշաֆտի ղեկավարման որոշումների կայացմանը նրանց հնարավորություն է տալիս ստեղծել օգուտներ իրենց իսկ համար՝ աշխատելով որպես իրենց սեփական լանդշաֆտի տնտեսավարներ: Տարածքում պահպանվող լանդշաֆտի ստեղծման տեղային շահը իհարկե տեղի համայնքների համար տուրիզմի հետ կապված այլընտրանքային եկամուտի ստեղծման հնարավորությունն է, որը տարածքի միջազգային տեսանելիության բնականոն հետևանք է:

2.3 Սահմանափակումներ, հնարավորություններ և վտանգներ

Սահմանափակումներ:

Պահպանվող տարածքի կազմավորման սահմանափակումները հողօգտագործման և հողի վարձակալման կարգավորումներն են: Այսօրվա դրությամբ պահպանվող տարածքներում գտնվող սեփական հողերը չեն համարվում այս տարածքների մասը, ինչը նպաստում է պահպանվող տարածքների մասնատվածությանը: ԲՀՊՏ-ի վարչական անձնակազմը չունի մասնավոր հողօգտագործման վերահսկողության և մոնիտորինգի որևէ իրավունք ու մոտեցում, իսկ սեփականատերերը չունեն ԲՀՊՏ-ի պաշտպանության և կառավարման որևէ պարտավորություն: Այլապես, եթե մասնավոր հողատարածքը գտնվում է մի գոտում, որը

Հայաստանում ընդունված գոտիների դասակարգմամբ դառնալու է «հատուկ պահպանվող տարածք», կենտրոնական իշխանությունը իրավասու է օտարել տվյալ հողերը՝ ի օգուտ գյուղացու: Ակնհայտ է, որ այս մեխանիզմը չի ստեղծում դրական փոխկապակցվածություն համայնքների և դրանց լանդշաֆտների միջև, և որ տեղի բնակչության համար պահպանվող տարածքի ստեղծումը իրենց խնդիրները լուծելու փոխարեն կարող է խնդիր դառնալ:

Կոնֆլիկտը կարող է նաև ծագել քարի հանքերի պատճառով, քանի որ դրանք համատեղելի չեն պահպանվող տարածքների կարգավիճակի հետ և ծանր ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի և լանդշաֆտների վրա: Այդպիսի բնօգտագործման առկայությունը կարող է կոնֆլիկտի առարկա դառնալ մասնավոր շահերի և կառավարման նպատակների միջև:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման առաջնայնություններից է Նորավանքի կիրճի վերականգնումը, որի էկոլոգիական պայմանները բնապահպանական տեսանկյունից այժմ գտնվում են շատ վատ վիճակում:

Հնարավորություններ: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը մեծ հնարավորություն է տալիս տեղի բնակչությանը: Առաջին հերթին, այն նրանց հնարավորություն կտա տեղական մակարդակում կառավարել լանդշաֆտը և բնական ռեսուրսները, որոնց հետ մեծապես կապված են նրանց հիմնական կարիքները: Մեր կարծիքով, տեղական կառավարությունը կերաշխավորի պահպանվող տարածքի երկարաժամկետ տնտեսական և էկոլոգիական կայունությունը: Եթե տեղի բնակչությունը իրեն համարի լանդշաֆտի տնտեսավար և կառավարիչ, իսկ ֆերմերները մշակեն հողերը կայուն էկոլոգիայի սկզբունքներով, կենսաբազմազանության և լանդշաֆտի հատկանիշների պահպանությունը կդառնա կառավարման գործընթացների և ռազմավարությունների բնականոն հետևանք: Օրգանական գյուղատնտեսության որոշ պարզ սկզբունքներին հետևողական լինելու շնորհիվ ֆերմերները կգիտակցեն, որ իրենց աշխատանքը երկարաժամկետ հեռանկարում կպահպանի բնական էկոհամակարգի արտադրական կարողությունը և կխթանի բարձրորակ գյուղարտադրանքի գոյացումը ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան շուկաներում: Նման սկզբունքները պետք է հիմնված լինեն ֆերմերների կողմից համաձայնեցված և ընդհանուր «Լանդշաֆտի տնտեսավարման էթիկայի» վրա: Տեղի շուկայի զարգացման խնդիրը համաձայնեցված է պահպանվող լանդշաֆտում ներկա բոլոր համայնքների հետ: Խթանելու համար պահպանվող լանդշաֆտի սահմաններում տեղական արտադրանքի սպառումը արտադրանքը կվաճառվի ինչպես տեղի բնակիչներին, այնպես էլ՝ զբոսաշրջիկներին, որոնց հետաքրքրում է օրգանական գյուղատնտեսության մեթոդների հետևողականությամբ արտադրված տեղական, ավանդական սնունդը: Այս համատեքստում «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծումը հնարավորություն է տալիս պահպանել տարածքի ագրոկենսաբանական հատկանիշները և միաժամանակ՝ բնական կենսաբազմազանությունը: Լանդշաֆտի տեսարժան և գեղագիտական արժեքները (մշակութային լանդշաֆտ և պատմական ժառանգություն), կենսավայրերի առողջ պայմանները և կարևոր կենսատեսակների (ընձառյուծ, բեզուարյան այծ, անգղի տեսակներ և այլն) հիմնական արեալը նախապայման են հանդիսանում տարածքում էկոտուրիզմի զարգացումը խթանելու համար: Այսպիսով դրանց շահագործումն ու պահպանությունը տեղի համայնքների կողմից կարող են դիտարկվել որպես շահույթ իրենց իսկ տնտեսության համար: Բացի այդ, պահպանվող լանդշաֆտի ստեղծումը կարող է ապահովել տարածքի միջազգային տեսանելիությունը և նպաստել կենսաբազմազանության և լանդշաֆտի պահպանությանը, գյուղական համայնքների

զարգացման միջազգային ծրագրերի ներթափանցմանն ու դրամավորման նախաձեռնություններին: Պահպանվող լանդշաֆտը կապահովվի զբոսաշրջության մի շարք ծառայություններով և հարմարություններով (կացարաններ, տեղեկատվական կենտրոններ, կայանման տեղեր, հանրային ծառայություններ և այլն)՝ բնության և մշակութային հիմնական հատկանիշները փոխկապակցելու և զբոսաշրջիկների կողմից տարծքի օգտագործումը դյուրացնելու համար: Նպատակն է իրենց հանգիստը ծրագրող զբոսաշրջիկներին մի քանի օրով գրավել տարածք՝ այսպիսով խթանելով վայրի բնության և պատմական ժառանգության ներկայացուցչությունը և առավել ընդարձակ տարածքային կազմում հասանելի դարձնելով հանգստի բազմաթիվ հետաքրքիր և հիասքանչ վայրերը: Պահպանվող լանդշաֆտում կծրագրվի հետիոտն երթուղիների մի ցանց, որտեղ կտեղադրվեն տեղանքի և տեսարժան վայրերի մասին տեղեկատվական վահանակներ և ճանապարհային ուղեցույցեր: Զբոսաշրջիկները հնարավորություն կունենան վարձակալել հեծանիվներ կամ վճարել տեղի բնակիչներին ձիարշավ կազմակերպելու համար: Յուրաքանչյուր գյուղում նախանշված տեղեկատվական կենտրոններին կամ տուրիստական գրասենյակներին դիմելով՝ տուրիստները կգտնեն պահպանվող լանդշաֆտում իրենց հանգիստը կազմակերպելու համար անհրաժեշտ ինֆորմացիան: Այնտեղ նրանց կտրամադրեն նաև տեղանքի և պատմական հուշարձանների քարտեզներ, ինֆորմացիա տեղանքի հասանելիության ուղիների վերաբերյալ (հետիոտն, հեծած կամ հանրային տրանսպորտով), հանգստյան տան կամ փոքր հյուրանոցի տեղանքի, ռեստորանի և կրպակի (որտեղ հնարավոր կլինի ձեռք բերել որոշ տնական կամ շրջանին հատուկ մթերքներ՝ պանիր, մածուն, գինի, լավաշ, մեղր, ջեմ, չիր և այլն) ուղեցույց, ինֆորմացիա բնության գրկում ժամանցի, նախրապանի կամ հողագործի առօրյային հետևելու հնարավորությունների վերաբերյալ (պանրի արտադրություն, արածեցում, մեղրարտադրություն, ավանդական ճաշատեսակների պատրաստում), ինֆորմացիա տեղանքին բնորոշ սննդի և ճաշատեսակների, ինչպես նաև յուրաքանչյուր գյուղի ինքնությունը տարբերակող և ըստ հնարավորության՝ վաճառքի ներկայացված արհեստի գործերի վերաբերյալ: Յուրաքանչյուր գյուղում կբացվի տեղական արտադրանքի մանրածախ շուկա և այն կկառավարվի տեղի բնակչության կողմից. այստեղ նրանք կվաճառեն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտին հատուկ որակային հատկանիշներով առանձնացող արտադրանք: Մակնիշակիր այս արտադրանքը կդառնա միաժամանակ և հավաստագրում, և երաշխիք այն զբոսաշրջիկների համար, որոնց ընտրությունը կլինի պահպանվող լանդշաֆտի տարածքում ստեղծված բնական, կենսաբանական սնունդը և արտադրանքը: Շնորհիվ լավ նախագծված գովազդի և ինտերնետ հրապարակայնության, պահպանվող լանդշաֆտ կայցելեն նաև միջազգային և ազգային կամավորականների խմբեր՝ ներգրավվելով «գլխատների» կարգի մշակութային ժառանգության պահպանության գործընթացում, ինչպես նաև՝ եկեղեցիների վերակառուցման և բնության, օրինակ՝ անտառների վերատնկման և աղտոտված վայրերի մաքրման աշխատանքներում: Միջազգային տեսանելիությունը հնարավոր կդառնա միայն տարածքի աննախադեպ լանդշաֆտի և հարուստ կենսաբազմազանության կանոնավոր և ճիշտ պահպանության շնորհիվ:

Վտանգներ: Ներկա իրավիճակը և տարածքի հիմնական հատկանիշների վրա ազդող հիմնական վտանգները:

ԲՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ	ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳՆԵՐ
Գիհու անտառ Մոզրով և Ամադու համայնքների վերին հատվածում	Հազվագյուտ ծառեր Մասնատված հողատարածքներ	Վառելափայտի հավաք Անասունների արածեցում
Ջաֆարի և համապատասխան վայրի յուրաքանչյուր ցածրադիր կիրճի ավիամերձ լայնատերև անտառ	Դեզրադացվում են որոշ հատվածներում	Ապօրինի անտառահատում և վառելափայտի հավաք
Նորավանքի ավիամերձ լայնատերև անտառ	Շատ նոսր անտառածածկ	Գնիշիկ գետավազանում ջրի սակավություն Նախկինում՝ վառելափայտի հավաք
Սաղարթավոր մնացորդային անտառ Մոզրովի շրջակայքում	Հազվագյուտ ծառեր Դեզրադացվում են որոշակի հատվածներում Մասնատված հողատարածքներ	Վառելափայտի հավաք
Կերհանդակներ և խոտհարքներ Գնիշիկի, Բոլորաբերդի և Գանձակի շրջակայքում	Հանգամանալի ինֆորմացիայի պակաս	Չկարգավորված արածեցում ամռանը Խոտհունձ և այրում բերքահավաքից հետո Էրոզիա և անապատացում
<i>Triticum boeoticum</i> , <i>T. araraticum</i> չոր մարգագետին	Հանգամանալի տեղեկության բացակայություն	Գերարածեցում ամռանը Թունաքիմիկատների օգտագործում
Արփա գետ	Ջրի վատ որակ	Կոյուղու համակարգ Վայքից և Ջերմուկից հավաքված թափոններ Թունաքիմիկատների օգտագործում գետի երկայնքով
Մշակվող հողամասեր Արփա գետի երկայնքով	Գերշահագործված	Գերօգտագործմամբ պայմանավորված հողի որակի նվազեցում Անկայուն գյուղատնտեսական մեթոդների կիրառում Վարելահողերի էրոզիա
Խաղողի տեռասային այգիներ Նորավանքում	Նախկինում երկար ժամանակ չի օգտագործվել. գտնվում է քայքայման վիճակում Ոռոգման ջրի պակաս	Հողի անապատացում և էրոզիա, ինչը նպաստում է տեռասային համակարգի ոչնչացմանը Բույսերի չորացում, խաղողի տեղական տարատեսակների

Հացահատիկային տեռասային վայրեր Բոլորաբերդի շրջակայքում	Հին ծառերը հատվել են էներգետիկական ճգնաժամի ժամանակ Մասամբ օգտագործվող Մշակվող տարածքների քայքայում անուշադրության պատճառով Ոռոգման համակարգի բացակայություն	վերացման պոտենցիալ վտանգ
Հաճարի և վայրի նախնիներից առաջացած ցորենի տեղական տարատեսակների մշակվող տարածքներ	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն: Վերջին 5 տարվա ընթացքում տեղական տարատեսակների փոխարինում ցորենի ներմուծվող տարատեսակներով	Ագրոկենսաբազմազանության կորստի պոտենցիալ վտանգ
Ծիրանի և դեղձի հնագույն այգիներ	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն: Վերջին 10 տարվա ընթացքում այգիների տարածքը 60%- ով կրճատվել է ոռոգման համակարգի բացակայության պատճառով և այն պատճառով	Ագրոկենսաբազմազանության կորստի հնարավոր վտանգ Տեղական կլիմայական և հողային պայմաններին սովոր տարատեսակների կորստի պոտենցիալ վտանգ
Հնագույն խաղողի այգիներ	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն: Վերջին 10 տարվա ընթացքում խաղողի այգիների տարածքը կրճատվել է 50%-ով ոռոգման համակարգի բացակայության պատճառով և այն պատճառով	Ագրոկենսաբազմազանության կորստի պոտենցիալ վտանգ Տեղական կլիմայական և հողային պայմաններին սովոր տարատեսակների կորստի պոտենցիալ վտանգ
Կարստային քարանձավների համակարգ (Մագիլի, Արջերի, Մոզրովի, Զրովանք)	Դեռևս լավ ուսումնասիրված չէ Մանրամասն տվյալների բացակայություն	Ստալակտիտների և ստալագմիտների ոչնչացում տեղացիների կողմից Չկարգավորված անվերահսկելի մուտքը խախտում է էկոլոգիական պրոցեսները Զբոսաշրջիկների ապօրինի

Բեգոարյան այծ	Պոպուլյացիայի մասին անբավարար ինֆորմացիա	այցելություններ, որոնք կազմակերպվում են տուր-օպերատորների կողմից Արածող անասունների և հովիվների կողմից հարուցվող անհանգստություն Հնարավոր որսագողություն Խոտի վերացում և այրում բերքահավաքից հետո Պոտենցիալ անհանգստություն զբոսաշրջիկների կողմից
Կովկասյան ընձառյուծ	Անբավարար ինֆորմացիա պոպուլյացիայի մասին Անցնում է պահպանվող լանդշաֆտի տարածքով, երկար չի մնում որսատեսակների անբավարար քանակների պատճառով	Որսատեսակների պակաս Արեալի մասնատվածություն Անհանգստություն անասունների և հովիվների կողմից Հնարավոր որսագողություն Խոտածածկի հնձում և այրում բերքահավաքից հետո Պոտենցիալ ոչնչացում հովիվների կողմից անասուններին պաշտպանելու նպատակով Պոտենցիալ անհանգստություն զբոսաշրջիկների կողմից
Գորշ արջ	Պոպուլյացիայի մասին անբավարար ինֆորմացիա	Արեալի մասնատվածություն Հնարավոր որսագողություն Պոտենցիալ ոչնչացում հովիվների կողմից անասուններին պաշտպանելու նպատակով Պոտենցիալ անհանգստություն զբոսաշրջիկների կողմից
Հայկական մուֆլոն	Հանդիպում է պահպանվող լանդշաֆտի ենթալպյան և ալպյան մարգագետիններում	Հնարավոր որսագողություն Անհանգստություն անասունների և հովիվների կողմից
Չղջիկներ	Ոչ բավարար տվյալներ	Չղջիկների հիմնական ապրելավայր հանդիսացող քարանձավներ են հաճախ այցելում զբոսաշրջիկները
Թռչուններ	Ոչ բավարար տվյալներ	Հնարավոր որսագողություն Գիշատիչ թռչունների համար որսատեսակների պակաս

Բուսատեսակներ

Հայկական
բարձրավանդակի էնդեմիկ
տեսակ

Չկանոնակարգված հավաք
Արածեցում

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորավանքի համալիր

ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ

Պետության կողմից
բավարար
պահպանություն
Վերականգնվել է 1982-
1998 թթ-ին

ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳՆԵՐ

Տարողությունների գերբեռնում
ամառվա՝ զբոսաշրջիկների
առավելագույն ներհոսքի
ժամանակ
Լանդշաֆտի կարգավիճակի
վատթարացում զբոսաշրջության
վերահսկողության պակասի
պատճառով

Գնիշիկի եկեղեցի

Պահպանության
անբավարար վիճակ
Մասամբ ավերված
1920-1963թթ-ին
օգտագործվել է որպես
ջրաղաց, ներկայումս չի
օգտագործվում

Ամբողջական փլուզման ռիսկ,
եթե առաստաղը, կտուրը և քարե
որմնաշարքը մոտ ապագայում
չվերականգնվեն
Պատմական հուշարձանների
պահպանության գործում
տեղացիների
շահագրգռվածության
բացակայություն

Գլխատներ Գնիշիկում (4 օրինակ),
Արենիում (6 օրինակ) և
Ագարակաձորում (2 օրինակ)

Դրանց մեծ մասը վատ
վիճակում է և ունի
անհապաղ
վերականգնման
անհրաժեշտություն

Անհապաղ վերակառուցման
չդիմելու դեպքում կա հիմնովին
փլուզման վտանգ
Տեղի բնակչության՝ առկա
ժառանգության պատմական և
մշակութային կարևորության
մասին իրազեկության ցածր
մակարդակ

Գանձակի եկեղեցի

Լավ պահպանված
presbiterium-ը մասամբ
ավերված է
Դեռևս օգտագործվում է
տեղի բնակչության կողմից
(ապրիլ-նոյեմբեր)

Էրտիչ բերդ Արփի գյուղի մոտ

Քարուքանդ վիճակում է և
դժվարհասանելի է
զբոսաշրջիկների համար

Ճիշտ և անհապաղ
չվերակառուցվելու դեպքում մի
քանի տարվա ընթացքում
ենթակա է փլուզման վտանգի
Կավե խեցեղենի և այլ
հնագիտական նյութերի
ապօրինի ձեռքբերման

Զրովանք	Աղտոտված տեղամաս է: Շրջակա լանդշաֆտները վատ են պահպանվում	պոտենցիալ վտանգ Տեսարժան և էսթետիկ արժեքի կորուստ Զրի աղտոտում ավերին գտնվող աղբանոցներից
Ագարակաձորի քարե կամուրջ	Լավ վիճակում է Վերանորոգվել է 1996թ-ին	
Արենիի եկեղեցի	Լավ վիճակում է Վերականգնվել է 1967-թ-ին	
Ռասկապերտը գտնվում է Նորավանքին գուգահեռ կիրճում	Հանգամանալի ինֆորմացիայի պակաս	Կավե խեցեղենի և այլ հնագիտական նյութերի ապօրինի ձեռքբերման պոտենցիալ վտանգ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ	ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳՆԵՐ
Արենիի, Արփիի, Ագարակաձորի գինու գործարաններ	Լավ աշխատում են Արտադրանքի ցածր որակ տեխնիկական գիտելիքների ցածր մակարդակի պատճառով	Խաղողի ներմուծված տարատեսակների օգտագործում Շուկայի ոչ բավարար զարգացում տեղական արտադրանքի թերագնահատման պատճառով
Եղեգնաձորի պահածոների գործարան	ԽՍՀՄ-ի փլուզումից հետո չի աշխատում	
Գնիշիկի և Արփիի քարի հանքեր	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն:	Հողի էրոզիայի պոտենցիալ վտանգ, հատկապես՝ Գնիշիկում Լանդշաֆտների կարգավիճակի վատթարացում
Բրդյա գորգագործություն Արփիում և Գնիշիկում	Գործընթացում ընդգրկված են միայն ծեր կանայք	Հմտությունների և վարպետության կորուստ երիտասարդ սերունդի շրջանում
Մեղվաբուծություն Գնիշիկ և Ամաղու գյուղերում	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն: Կիրառվում է միայն բարձր գոտու տափաստաններում և մարգագետիններում	Գերարածեցում չոր տափաստաններում Զրի պակաս Արտադրանքը չի համապատասխանում է առողջապահության չափանիշներին,

Պանրի արտադրություն Գնիշիկում	Արտադրանքը մասամբ վաճառվում է Երևանում և մարզից դուրս այլ վայրերում	ինչը խոչընդոտում է շուկայի զարգացման գործընթացներին
	Մանրամասն ինֆորմացիայի բացակայություն	Պանրի արտադրության մեջ օգտագործվող վայրի բուսատեսակների սակավություն
	Շուկան զարգացած չէ	Արտադրանքը չի համապատասխանում առողջապահության չափանիշներին, ինչը խոչընդոտում է շուկայի զարգացման գործընթացներին

ԳԼՈՒԽ III. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Տեսական

Մինչև 2018թ. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը բավական հայտնի կլինի որպես արտառոց վայրի բնության և մշակութային տարածք, որը հաջողությամբ պահպանվում է համայնքների կառավարող թիմի և համայնքների համագործակցության շնորհիվ:

Պահպանվող տարածքը խթանել է տնտեսական միջավայրի բարելավումը շրջանում, որտեղ իրականացվել է պլանավորում և նպաստել է կենսամակարդակի բարձրացմանը նոր աշխատատեղերի ստեղծման ծրագրի միջոցով՝ հիմնվելով ռեսուրսների կայուն օգտագործման զարգացման և շրջակա միջավայրի առումով անվնաս արտադրության վրա:

Տուրիզմի ոլորտը բավական լավ է հաստատված. այն կենտրոնացած է բազմաթիվ բնական և պատմամշակութային արժեքների վրա ոչ միայն պահպանվող տարածքում, այլև ողջ պահպանման գոտում:

Պահպանվող լանդշաֆտի հիմնական խնդիրն է ապահովել բնական և ավանդաբար ձևափոխված մշակութային լանդշաֆտների պահպանությունը, վերականգնումը, գիտական ուսումնասիրությունները, շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացումը, կանոնակարգված զբոսաշրջության և ռեկրեացիայի նպատակներով օգտագործումը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կենդանիների անարգել տեղաշարժի ապահովումը:

3.2. Նպատակներ

Պահպանվող լանդշաֆտը բնական կամ մարդու կողմից ձևավորված բնապահպանական, մշակութային, գեղագիտական արժեք ներկայացնող առանձնացված տարածք է, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են ակտիվ կառավարման միջամտությամբ և օգտագործվում են գիտական ուսումնասիրությունների, շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական դաստիարակության, կանոնակարգված զբոսաշրջության և ռեկրեացիայի նպատակներով:

Ընդհանուր նպատակներ.


- 1) Հիմնական կենսավայրերի պահպանություն պահպանվող լանդշաֆտում բնակվող վտանգված տեսակների պոպուլյացիայի պահպանությունը ապահովելու համար:
- 2) Հիմնական էկոլոգիական միջանցքների և կենսավայրերի միացության գործառույթների վերականգնում՝ կենդանիների անվտանգ տեղաշարժի համար:
- 3) Արտադրական գործունեության՝ որպես բնապահպանության առումով պատասխանատու գյուղատնտեսական և արհեստագործական աշխատանքների խթանում: Նպատակն է բարելավել գյուղական համայնքների ապրուստի խոցելի պայմանները:
- 4) Ռեկրեացիոն գործողությունների խթանում պահպանվող լանդշաֆտի հարակից տարածքներում՝ տնային տնտեսությունների համար ստեղծելով այլընտրանքային եկամուտ ստանալու հնարավորություններ:
- 5) Մարգային մակարդակում նպաստել բնապահպանության և կայուն զարգացման գործընթացին՝ ստեղծելով պահպանվող գոտի և նպաստելով պահպանվող գոտու համայնքների զարգացմանը:

ԳԼՈՒԽ IV. «ԳՆԻՇԻԿ» ՊԱՀՊԱՆՎՈՂ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ

4.1. Գոտիավորման հասկացությունը

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գոտիավորումը հանդիսանում է տարածքային կառավարման ընդունված գործիք, որն օգնում է աշխատանքների կազմակերպմանը և արդյունավետ դարձնում պահպանվող լանդշաֆտի սահմաններում նշված գոտիներում կիրառվող մարտավարությունը (Քարտեզ 4): Այս մոտեցման կիրառումը կնպաստի ենթակառուցվածքի զարգացմանը և ռեսուրսների արդյունավետ ավանդական ու հեռանկարային օգտագործմանը «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հատուկ առանձնացված էկոլոգիապես խոցելի տարածքներում:

Քարտեզ 4. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գոտիավորման սխեման



4.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի գործառնական գոտիները

Համաձայն «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կանոնադրության պահպանվող լանդշաֆտը բաժանվում է հետևյալ երկու տարածագործառնական գոտիների՝

- 1) հիմնական
- 2) ավանդական հողօգտագործման

4.1.2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտի

1. Պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտում արգելվում է՝

1) ջրային ռեսուրսների օգտագործումը ջրային համակարգերի միջոցով, և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

2) բնակելի, հասարակական և արտադրական օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունն ու շահագործումը, բացառությամբ պահպանվող լանդշաֆտի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության (անտառապահի տնակ, արգելափակոց, սահմանանշան, դիտակետ, հակահրդեհային ճանապարհներ, նախագգուշացնող և տեղեկատվական ցուցանակներ, բնական նյութերով պատրաստված ոչ հիմնական տաղավարներ, պահպանվող լանդշաֆտի մուտքի մոտ այցելուների կենտրոն).

3) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

4) որսորդությունը, ձկնորսությունը.

5) կենդանիների և բույսերի օտարածին տեսակների, կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծումը և կլիմայավարժեցումը, ինչպես նաև առանձին տեսակների քանակի մեծացման կամ պակասեցման նպատակով տարվող որևէ աշխատանք.

6) բույսերի, ծաղիկների, պտուղների և սերմերի մթերումը, բացի պահպանվող լանդշաֆտի տարածքի գիտական հետազոտությունների համար նախատեսված հավաքածուների հավաքից.

7) անտառահատումները, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ.

8) թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

9) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը և տարանցիկ տեղափոխումը.

10) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, որոնք առաջացնում են հողային ծածկույթի խախտում.

11) օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների, լցակայանների, պոչամբարների և հանքարդյունաբերության հետ առնչվող ցանկացած այլ օբյեկտների տեղաբաշխումը.

12) ընդհանուր օգտագործման ճանապարհներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կայանելը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

13) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

2. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, արգելվում է այլ նպատակներով ֆիզիկական և իրավաբանական անձանց մուտքն պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտի: Մուտքի թույլատրման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

3. Պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտում թույլատրվում է՝

1) բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գիտական ուսումնասիրությունը, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը.

2) պահպանվող լանդշաֆտի կառավարման պլանով սահմանված երթուղիներով էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպումը.

3) կառավարումն իրականացնող կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործումը.

4) հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը.

5) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների (դպրոցականների համար բաց դասերի, էքսկուրսիաների, ցուցահանդեսների, բնապահպանական օրերի նշումների կազմակերպում) և ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացումը.

6) իրազեկման նպատակով բնապահպանական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

4. Պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտու օգտագործումը էկոլոգիական զբոսաշրջության և ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակով վճարովի է: Պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտու օգտագործման վճարների տեսակներն են.

1) էկոլոգիական զբոսաշրջության համար մուտքի վճար.

2) սպասարկման ծառայությունների համար նախատեսված վճար.

3) Պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտում ուսումնաարտադրական պրակտիկաների համար վճարը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի համաձայն կնքված պայմանագրով:

5. Յուրաքանչյուր մուտքի վճարի չափը, միաժամանակ մուտք գործող անձանց թույլատրելի քանակը և տարածքում գտնվելու ժամանակահատվածը սահմանում է լիազոր մարմինը:

6. Յուրաքանչյուր պահպանվող լանդշաֆտի հիմնական գոտու համար սահմանված մուտքի, սպասարկման ծառայությունների և ուսումնաարտադրական պրակտիկաների վճարը մուտքագրվում է տվյալ պահպանվող լանդշաֆտի կառավարումն իրականացնող կազմակերպության դրամարկղ և օգտագործվում է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

7. Պահանվող լանդշաֆտի հիմնական գոտու մուտքը գիտական ուսումնասիրությունների, մոնիթորինգի և կրթադաստիարակչական միջոցառումների իրականացման նպատակով անվճար է և կատարվում է լիազոր մարմնի կողմից հաստատված անցագրով, որը տրվում է պահպանվող լանդշաֆտի կառավարումն իրականացնող կազմակերպության կողմից:

4.1.3. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ավանդական հողօգտագործման գոտի

Պահպանվող լանդշաֆտի ավանդական օգտագործման գոտու տարածքում արգելվում է՝

1) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

2) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների աճելավայրերի և ապրելավայրերի պայմանների խախտումը.

3) բույսերի և կենդանիների օտարածին տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

4) անտառահատումները, բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների.

5) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը.

6) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտումով), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների, լցակայանների, պոչամբարների և հանքարդյունաբերության հետ առնչվող ցանկացած այլ օբյեկտների տեղաբաշխումը.

7) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

1. Պահպանվող լանդշաֆտի ավանդական հողօգտագործման գոտու տարածքում թույլատրվում է.

1) բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գիտական ուսումնասիրությունը, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը այդ թվում՝ քաղաքացիների հանգստի կազմակերպման սպասարկման ծառայությունների մոնիթորինգը.

2) կանոնակարգված զբոսաշրջության կազմակերպումը, այդ թվում՝ լանդշաֆտին համահունչ հանգստի տաղավարների և դիտակետերի տեղադրումը.

3) ռեկրեացիայի նպատակով հողերի՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան կառուցապատման իրավունքով տրամադրումն ու սպասարկման ծառայությունների կազմակերպումը.

4) արածեցման նպատակով արոտավայրերի հերթափոխային օգտագործումը.

5) կանոնակարգված խոտհունձը.

6) սանիտարական և խնամքի հատումները, անտառվերականգնումը, ծառերի և բույսերի տնկումը.

7) լանդշաֆտների հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունները կանխարգելող, հակահրդեհային, ինչպես նաև խախտված լանդշաֆտների վերականգնման միջոցառումները՝ համաձայն կառավարման պլանի.

8) սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը.

9) մշակութային լանդշաֆտների և պատմամշակութային հուշարձանների վերականգնումը:

10) ավանդական և օրգանական գյուղատնտեսական աշխատանքները.

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սիրողական ձկնորսությունը:

4.1.4. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի պահպանման գոտի

1. Բնության հատուկ պահպանվող տարածքի էկոհամակարգերի և դրա բաղադրիչների վրա բացասական մարդածին ներգործությունը մեղմացնելու նպատակով ստեղծվում է պահպանման գոտի:

2. Պահպանման գոտու ստեղծումը սեփականության ձևերի փոփոխություն չի նախատեսում: Պահպանման գոտին ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Պահպանման գոտու սահմանների որոշման համար հիմք են հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքի վրա ազդեցության գոտու ռելիեֆային առանձնահատկությունները՝ ջրբաժաններ, ձորակներ, գետեր, գագաթներ և այլն, որոնք համեմատաբար կայուն սահմաններ են:

4. Պահպանման գոտում արգելվում է.

1) բույսերի և կենդանիների օտարածին տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

2) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

3) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը:

ԳԼՈՒԽ V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

5.1. Կառավարման ծրագիր

Սույն բաժինը կազմված է 5 կառավարման ծրագրերից, որոնք կնպաստեն աշխատանքային պլանների, միջոցառումների ցանկերի և բյուջեների մշակմանը՝ ըստ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տեսլականի: Կառավարման պլանի համար ընտրվել են հետևյալ կառավարման ծրագրերը.

1) Վարչական ծրագիր

ա. Տնօրենություն

բ. Հաշվետվության և ֆինանսների ենթաբաժին

գ. Մատակարարման և տեխնիկական սպասարկման ենթաբաժին

դ. Մարդկային ռեսուրսների ենթաբաժին

2) Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր

3) Պահպանության ծրագիր

4) Տուրիզմ, էկոլոգիական իրազեկություն և հասարակայնության հետ կապերի ծրագիր

5) Գիտական և մոնիթորինգի ծրագիր

5.1.1. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի վարչական ծրագիր

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարումը պետք է իրականացվի «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրինության և կառավարման խորհրդի կողմից, որի մեջ լիարժեք ներկայացված կլինի «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կարևոր շահագրգիռ կողմը՝ պահպանման գոտու համայնքները:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման խորհրդի կազմի մեջ մտնելու են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրենը, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի փոխտնօրենը, և մեկական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից, Վայոց Ձորի մարզպետարանից, տեղական հասարակական կազմակերպությունների ֆորումից և պահպանման գոտու համայնքներից:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի անձնակազմի, Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության, մարզպետարանի ներկայացուցիչները լինելու են խորհրդի մշտական անդամներ, իսկ մնացած մասնակիցները՝ ընտրովի: Համայնքների ներկայացուցիչները կառաջադրվեն համապատասխան համայնքների կողմից:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման խորհրդի հիմնական պարտականությունները հետևյալն են.

- 1) աջակցել և հետադարձ կապ ապահովել «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի և պահպանման գոտու համայնքների միջև,
- 2) քննարկել և հնարավորությունների չափով լուծել «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի և պահպանման գոտում արկա խնդիրները,
- 3) քննարկել պահպանման գոտու զարգացման արկա և հեռանկարային պլանները և աշխատանքները և աջակցել ծրագրերի իրականացմանը,
- 4) ապահովել «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի համագործակցությունը տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

Կառավարման խորհրդի նախագահ ընտրվում է խորհրդի կողմից ձայների մեծամասնության սկզբունքով. Ընտրությունը իրականացվում է երեք տարին մեկ: Նախագահը խորհրդին նախապես հայտնում է խորհրդի անդամների վերընտրման օրվա մասին: Նախագահի պարտականությունները իրենց մեջ ներառում են.

- 1) խորհրդի ամենամյա նիստերի կազմակերպումն ու անցկացումը
- 2) նիստերի օրակարգի մշակումը, պատրաստումն և բաժանումը խորհրդի անդամների մեջ նիստի օրվանից մեկ շաբաթ առաջ
- 3) խորհրդի նիստերի ղեկավարումը

Չնախատեսված իրավիճակների դեպքում նախագահը կամ նրա ներկայացուցիչը կարող են կազմակերպել լրացուցիչ նիստեր:

Պահպանման գոտու համայնքների ներկայացուցիչների կամ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի այլ շահագրգիռ կողմերի բոլոր բողոքները պահանջում են խնդրի գրավոր նկարագրությունն և ներկայացումը կառավարման խորհրդի նիստի ժամանակ: Խորհուրդը վերջնական պատասխանատվություն է կրում տարաձայնությունների կարգավորման համար և կարող է օգնություն խնդրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից, Վայոց Ձորի մարզպետարանից:

Նիստերին իրար ետևից 3 անգամ բացակայելու դեպքում խորհրդի ընտրված անդամները մեխանիկորեն հեռացվելու են: Ցանկացած այլ դեպքերում (օրինակ՝ անվայել պահվածք) խորհուրդը կարող է բարձրացնել հեռացման հարցը ընդհանուր քվեարկությամբ և որոշումը կայացնել ձայների մեծամասնությամբ: Եթե «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրենը չի կատարում իր պարտականությունները, խորհուրդը իրավասու է իրականացնել նրա փոփոխությունը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը գլխավորում է տնօրենը, որը նշանակվում է Կառավարման խորհրդի կողմից:

Վարչական ծրագիրը գտնվում է տնօրենի ենթակայության տակ: Պահպանության ծրագիրը գտնվում է պահպանության գծով փոխտնօրենի ենթակայության տակ: Գիտություն և մոնիթորինգի բաժինը ղեկավարվում է բաժնի վարիչի կողմից: Տուրիզմ/Էկոլոգիական իրազեկություն, հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվում է բաժնի վարիչի կողմից: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ռեսուրսների օգտագործման ծրագրերը՝ գտնվում են մարկետինգի ծրագրի/բաժնի ղեկավարի ենթակայության տակ: Այսպիսով, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի անձնակազմի մեջ մտնում են 5 ծրագիր/բաժին:

Պահպանության ծրագրի ղեկավարը պատասխանատու է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի բոլոր տեղամասերի պետերի և տեսուչների գործունեությունը համակարգելու համար:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրինությունը աշխատելու է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման խորհրդի ենթակայության տակ: Այն պատասխանատու է լինելու պահպանվող լանդշաֆտում անցկացվող ամենօրյա աշխատանքների համար և ընդհանուր բնապահպանական և կառավարման գործունեության համար՝ ըստ կառավարման պլանի, բիզնես պլանի և տարեկան աշխատանքային պլանների: Առավել մանրամասն, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրենի գործառույթները հետևյալն են.

- 1) մշակել տարեկան աշխատանքային պլաններ և բյուջեներ՝ ամեն կառավարման ծրագրի համար
- 2) պատասխանատվություն կրել աշխատանքային պլանի, ծրագրային աշխատանքների, դրանց կանոնավոր համապատասխանեցման և ազդեցության մոնիթորինգի իրականացման համար
- 3) «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կողմից վաստակած բոլոր եկամուտները պահել «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ֆոնդում» և օգտագործել պահպանվող տարածքի կանոնադրական խնդիրները լուծելու համար:

5.1.2. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի անձնակազմի որակավորման բարձրացում

Հայտնի է, որ անձնակազմի շահագրգռվածության հիմնական տարրերն են համարվում.

ա) յուրաքանչյուր պաշտոնի համար պարտականությունների և աշխատանքի հստակ ներկայացում,

բ) մասնագիտական աճի հնարավորություն,

գ) աշխատավարձի գրավիչ չափս և ֆինանսական խթանման մեխանիզմներ:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրենի պարտականությունների մեջ է մտնում անձնակազմի հետ միասին հստակ աշխատանքային գործառույթների մշակումն և մասնագիտական աճի հնարավորության քննարկումը: Պետք է մշակվի աշխատակիցների արդյունավետ աշխատանքի հիման վրա խրախուսման համակարգ, որը աշխատելու է այնքան ժամանակ, մինչև աշխատավարձերը պաշտոնապես չդառնան բավականաչափ բարձր:

Որպես մասնագիտական աճի մի մաս յուրաքանչյուր աշխատակցին որակավորման բարձրացման հնարավորություն է տրվում: Նախապատվությունը տրվելու է աշխատատեղում իրականացվող դասընթացներին: Այն առանձին հմտությունները, որոնք հնարավոր չի լինի տեղում սովորել, ձեռք կբերվեն ուսուցման տեսքով «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի շրջանակներից դուրս: Աշխատատեղում իրականացվող դասընթացները առաջարկվելու են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի անձնակազմի բոլոր անդամներին: Ավագ անձնակազմը հնարավորություն կունենա պարբերաբար մասնակցելու սեմինարներին՝ կարիերայի աճի և աշխատանքի որակը բարձրացնելու համար: Ուսուցման ծրագիրը կազմակերպվելու է ֆինանսական միջոցների մատչելիությունից ելնելով: Նման ուսուցման արդյունավետությունը ամեն տարի ենթարկվելու է մոնիթորինգի և գնահատմանը:

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տնօրենի և ավագ անձնակազմի պարտականությունների մեջ մտնում է նաև ամենամյա ուսուցման դասընթացներին «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ողջ անձնակազմի գրանցումը: Նման ուսուցման բյուջեն մտնելու է պահպանվող տարածքի տարեկան

բյուջեի մեջ: Ուսուցման կուրսերի գրանցումը պետք է հաստատվի «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառավարման խարհրդի կողմից: «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տեսուչները անցնելու են բազային 14 օրվա, ուսուցողական դասընթացներ՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի փոխտնօրենի ղեկավարությամբ:


5.1.3. Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք

«Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ենթակառուցվածքին վերաբերվող ընդհանուր մարտավարությունն և ուղեցույցը հետևյալն են.

- 1) «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի կառույցների (շենք/շինություններ), տեղեկատվական վահանակների, սահմանակետերի նշանաձողերի, մուտքի դարպասների և այլ ենթակառուցվածքների տեսքը պետք է համահունչ լինի շրջակա միջավայրի հետ
 - 2) կառույցները պետք է լինեն գործնական տեսանկյունից հարմար և գեղագիտական տեսանկյունից հաճելի
 - 3) տեղեկատվական վահանակներն և ճանապարհային ցուցանակները պետք է ունենան հստակ բովանդակություն՝ «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի տարբերանշանով և պատրաստած լինեն ամուր նյութերից՝ սպասարկման ծախսերը նվազեցնելու համար
 - 4) շինարարության համար հնարավորության սահմաններում պետք է օգտագործվեն տեղական հումքը և աշխատուժը
 - 5) բոլոր կառույցները պետք է լինեն ամուր և երկրաշարժերին դիմացկուն /սեյսմոկայուն/
- «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի վարչական շենքը գտնվում է Մոզրով գյուղում, Գնիշիկ համայնքի վարչական սահմաններում (քարտեզ 5), իսկ այցելուների կենտրոնը՝ Ագարակաձոր – Գնիշիկ ճանապարհին՝ հանքային ջրի աղբյուրի հարևանությամբ:

Վարչական շենքի հարակից տարածքեում նախատեսված է պահակակետ և ավտոտնակներ:

Քարտեզ 5. «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ենթակառուցվածքի զարգացման սխեման



Ենթակառուցվածքի ստանդարտները

Պահպանության ծառայության տեսուչների և անձնակազմի համար նախատեսված տաղավարները, տեղական ապրանքների վաճառքի կրպակի տաղավարները, տեղեկատվական կենտրոն կամ հանգստի և ճամբարային տեղամասերում գտնվող փոքր ճաշարանները պետք է կառուցվեն՝ օգտագործելով տեղական արտադրության նյութ (քար, փայտ), ճանաչելով տեղական տիպոլոգիաները և ձևի ու չափի համատեքստում կարևորելով լանդշաֆտի էսթետիկ արժեքը: Լավագույն լուծումը կլինի այդ կառույցների ստանդարտացումը՝ դրանք առավել ճանաչելի դարձնելու նպատակով: Ավելին, մեր խորհուրդն է օգտագործել էկո-ճարտարապետական սկզբունքները:

- 1) ապահովել տաղավարի տանիքը անձրևաջրերի հավաքման դրենաժային համակարգով. ջուրը կանցնի ֆիլտրացիա և կհավաքվի ստորգետնյա ցիստեռներում,
- 2) ստեղծել արևային ջրատաքացման համակարգ,
- 3) միացնել զուգարանները և ցնցուղները հեղեղատար կոյուղի-դրենաժային համակարգին,
- 4) տեղադրել ֆոտովոլտային էլեկտրալամպեր, որոնք կստանան հոսանք տանիքում տեղակայված ֆոտովոլտային պանելներից:

Հանգստյան կամ գիշերանցի տեղամասերում տեղակայված ցնցուղներ կամ զուգարաններ: Միացնել զուգարանները և ցնցուղները կեղտաջրերի հեռացման կենտրոնական խողովակաշարին. ջուրը կանցնի մարգերով այնպես, որ կեղտաջուրը որևէ կերպ չվնասի շրջակա միջավայրին: Մարգերում աճում են առավել ջրասեր բույսեր, որոնց հատկապես համապատասխանում է նիտրատների և ֆոսֆատների պարունակությամբ ջրային զանգվածը:

Այցելուների, զբոսաշրջիկների և անձնակազմի համար ավտոկայանման, հանգստի կամ գիշերանցի տեղամասերում զուգարանների տեղադրում: Ինքնակոմպոստային զուգարանների կառուցում՝ ծակոտկեն հողով կոյուղաջրերի ներհոսքը կանխելու և ջուրը տնտեսելու համար: Կեղտը վերակազմավորվում է բնական պարարտանյութի, երբ կոմպոստի հորում խառնվում է բաղադրյալ պարարտանյութի (օդակեցական-կոմպոստի) հետ:

5.2. Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր

5.2.1. Հիմնավորում և խնդիրներ

Մարկետինգի բաժնի գործառնություններն են «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի պլանավորումը, նրա բոլոր կառույցների նեոարյալ գյուղատնտեսական արտադրության ստորաբաժանումների կանոնավոր սպասարկումը, սարքավորումների և շարժական գույքի վերանորոգումը և փոխարինումը, հսկողությունը, մոնիթորինգը և արտադրության մարկետինգը: Բաժինը գործում է բաժնի պետի ենթակայության տակ՝ պարկի ամբողջ անձնակազմի հետ սերտ համագործակցությամբ: Բաժնի պետը պատասխանատու է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ենթակառուցվածքների և սարքավորումների գործառնական պլանի մշակման համար: Բաժնի հիմնական խնդիրը կայանում է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ենթակառուցվածքների և սարքավորումների նորմալ գործունեության ապահովումը՝ համաձայն աշխատանքային պլանի: Համապատասխան աշխատանքների ուղեցույցը հետևյալն է.

- 1) ենթակառուցվածքների և սարքավորումների կառավարում (այդ թվում՝ տեսչական ստուգումներն ու հսկողությունը)՝ համապատասխան բաժնի պետի կողմից մշակված և սահմանված նորմաների և կանոնակարգի
- 2) պրոֆիլակտիկա :

Կառավարման խնդիրներ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Արենիի, Արփիի ու Ագարակաձորի գործարաններ	1. Վաճառվող արտադրանքի ծավալների մեծացում 2. Արտադրանքի որակի բարձրացում	1. Մինչև 2018թ. վաճառվող արտադրանքի ծավալները աճել են 10%-ով (ըստ 2011 թ-ի տվյալների) 2. Մինչև 2018թ. արտահանվող արտադրանքի ծավալները աճել են 10%-ով (ըստ 2011 թ-ի տվյալների)

Եղեգնաձորի պահածոների գործարան	1. Գործարանի վերագործարկում	տվյալների) 3. Մինչև 2018թ. գինու արտադրության համար օգտագործվող խաղողի տեղական տարատեսակների ծավալները աճել են 10%-ով (ըստ 2011թ-ի տվյալների) 1.Գործարանը վերագործարկվել է
Գորգագործություն Արփի և Գնիշիկ գյուղերում	1. Վաճառվող ծավալների մեծացում	1. Մինչև 2018 թ. վաճառվող գորգերի քանակը աճել է 25%-ով 2. Մինչև 2018թ. ամեն գյուղում բացվել է տեղական արտադրանքի առնվազն մեկ շուկա
Մեղվաբուծություն Գնիշիկ և Ամաղու գյուղերում	1. Վաճառվող ծավալների մեծացում	1. Մինչև 2018թ. վաճառվող մեղրի ծավալները աճել են 25%-ով (ըստ 2011թ-ի տվյալների) 2. Մինչև 2018թ. ամեն գյուղում բացվել է տեղական արտադրանքի առնվազն մեկ շուկա
Պանրի արտադրություն Գնիշիկում	1. Վաճառվող ծավալների մեծացում	1. Մինչև 2018թ. վաճառվող պանրի ծավալները աճել են 25%-ով (ըստ 2011թ-ի տվյալների) 2. Մինչև 2018թ. ամեն գյուղում բացվել է տեղական արտադրանքի առնվազն մեկ շուկա

5.2.2. Մարտավարություն

Բաժնում պետք է կիրառվի հետևյալ մարտավարությունը.

- 1) բաժնի պետը մշակում է աշխատանքային պլանը, որն ամեն տարի վերանայվում և բարեփոխվում է
